




9(47.225) [unclear] 1934

2-67 4, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 195, 196, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 466, 467, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 478, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 533, 534, 535, 536, 537, 538, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 567, 568, 569, 570, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 615, 616, 617, 618, 619, 620, 621, 622, 623, 624, 625, 626, 627, 628, 629, 630, 631, 632, 633, 634, 635, 636, 637, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 652, 653, 654, 655, 656, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 664, 665, 666, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 676, 677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 691, 692, 693, 694, 695, 696, 697, 698, 699, 700, 701, 702, 703, 704, 705, 706, 707, 708, 709, 710, 711, 712, 713, 714, 715, 716, 717, 718, 719, 720, 721, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 730, 731, 732, 733, 734, 735, 736, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 751, 752, 753, 754, 755, 756, 757, 758, 759, 760, 761, 762, 763, 764, 765, 766, 767, 768, 769, 770, 771, 772, 773, 774, 775, 776, 777, 778, 779, 780, 781, 782, 783, 784, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 794, 795, 796, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 805, 806, 807, 808, 809, 810, 811, 812, 813, 814, 815, 816, 817, 818, 819, 820, 821, 822, 823, 824, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 832, 833, 834, 835, 836, 837, 838, 839, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 852, 853, 854, 855, 856, 857, 858, 859, 860, 861, 862, 863, 864, 865, 866, 867, 868, 869, 870, 871, 872, 873, 874, 875, 876, 877, 878, 879, 880, 881, 882, 883, 884, 885, 886, 887, 888, 889, 890, 891, 892, 893, 894, 895, 896, 897, 898, 899, 900, 901, 902, 903, 904, 905, 906, 907, 908, 909, 910, 911, 912, 913, 914, 915, 916, 917, 918, 919, 920, 921, 922, 923, 924, 925, 926, 927, 928, 929, 930, 931, 932, 933, 934, 935, 936, 937, 938, 939, 940, 941, 942, 943, 944, 945, 946, 947, 948, 949, 950, 951, 952, 953, 954, 955, 956, 957, 958, 959, 960, 961, 962, 963, 964, 965, 966, 967, 968, 969, 970, 971, 972, 973, 974, 975, 976, 977, 978, 979, 980, 981, 982, 983, 984, 985, 986, 987, 988, 989, 990, 991, 992, 993, 994, 995, 996, 997, 998, 999, 1000

myon [unclear]

myon [unclear]

11

501


562

Գ. ԳԻՒԶԱԼԵԱՆ

54

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ

ՈՐՊԷՍ ՊԱՏՄԱԲԱՆ



ՅՊԱՐԱՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ

ԱՆՅԻՆԱՍ ԼԻՐԱՆԱՆ

1943

Ժողովուրդի Գործադիր Կոմիտե

Զ/ԽՐՄ Թ, Զօգրույթ, 1943

ՅՈՒՆԻՍԵՖ Է 1961 թ.

90(47.925)(092Արմյ) Գ. ԳԻՒԶԱԼԵԱՆ

Հայր Կոմունիստական Հայաստան
Հայր Կոմունիստական Հայաստան :

Սովետական Հայաստան :


ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ

ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԲԱՆ

ՀԱՅԿԱՆ

A. III
A 2641

19312



ՏՊԱՐԱՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՅ

ԱՆԹՈՒԿԱՆ ԼԻՐԱՆԱՆ

1943

Ն Ի Կ Ո Ղ Ա Յ Ո Ս Ա Գ Ո Ն Յ Ը Ո Ր Պ Է Ս Պ Ա Տ Մ Ա Բ Ա Ն

Ա.

Ն Ի Կ Ո Ղ

Ներկողայոս Ագոնցի մահով Հայոց պատմագիրութիւնը, բանասիրութիւնը և ընդհանրապէս հայ միտքը անփոխաբինելի կորուստ ունեցաւ: Նրա տեղը չափ երկար ժամանակ բաց կը մնայ: Ժիշտ է մեր հայրենիքում պատմագիրութիւնը հիմա մեծ վերելք կ'ապրի, սակայն այնտեղ աշխատող պատմագէտներին և ոչ մէկը նրա տեղը բռնել չի կարող: Խորհրդային Հայաստանի ամենէն հմտալից պատմաբանն անդամ, Յ. Մանանդեանը, որ շատ խնդիրներում Ագոնցի հակառակորդն է ու մրցակիցը, ստեղծագործելու, յօրինելու իր կարողութեամբ չի կարող հաւասարել Ն. Ագոնցի հետ: Գիտութիւնը, ուրեմն և պատմագիրութիւնն ստեղծագործութիւն է՝ արդիւնք մէկ մեծ անհատականութեան, մտածումի, ապրումի և համադրութեան: Ագոնցը բառի իսկական իմաստով գիտնական է՝ մեծ վերլուծող և մեծ համադրող: Այսպիսի պատմաբանը նոր նիւքեր քննութեան կ'առնէ նոր տեսակներ հանգէս կը բերի և նոր սխալներ կը մշակի: Նա ուղիներ կը բանայ զալիք ուսումնասիրողներին առաջ:

Մեր պայմանները թոյլ չեն տալիս մանրակրկիտ քննութեան ենթարկելու Ագոնցի գրական ժառանգութիւնը, որ չափազանց բազմազան է նիւթով և ընդարձակ՝ ծաւալով: Մեր ձեռքի տակ չունինք նրա ամբողջ գրականութիւնը: Ծառ բուն արտասահմանում կարելի չէ գտնել: Հայոց պատմագիտութիւնը և բանասիրութիւնը աւելի լաւ պայմաններում ընդարձակօրէն պիտի զբաղւի Ագոնցի հայագիտական երկերի ուսումնասիրութեամբ և նրա տեղը պիտի որոշէ մեր պատմագրական մտքի զարգացման

մէջ: Նա մէկ մտածող-գիտնական է, որի մօտով հայ քննական միտքը անտարբեր անցնիլ չի կարող: Մեր նպատակն է ընդհանուր գծերով որոշել նրա քննութեան նիւթը, նիւթի մշակման մեթոտները և բնորոշել նրա կառուցած Հայոց պատմութեան սխտեմը: Այսինքն ներկայացնել Ն. Ագոնցի պատմագիտութիւնը:

Ն. Ագոնցը պատմաբան է. նա ըզբաղուել է բանասիրական, լեզուական և գրական հարցերով, բայց միշտ այն միտումով, որ այդ իմացութիւններէ տրուեալները պիտի օժանդակեն պատմագիտական այս կամ այն հարցի լուսաբանութեան: Նրա քննութեան նիւթը Հայոց պատմութիւնն է, որքան և նա ըզբաղւի մեր հարեւան ժողովուրդներէ պատմութեամբ. վերջինները նրան նիւթ կը մատակարարեն լաւ հասկնալու մեր պատմական կեանքը: Հայոց պատմութիւնը մեկնուածք և երեւոյթ է, այլ մէկ անըաժանելի մասը Մերձասոր Արեւելքի պատմութեան: «Հայ երկիրը երբեք կտրւած, կզլիացած չի եղել արեւելքի լուր որ քաղաքակրթութիւններէն. այլ ապրել է նրանց մէջ իբրեւ կազմակից մաս և կրել նրանց շարժումներէ անմիջական հետեւանքը: Կարելի է ասել, որ այն ինչ որ ընդունւած է եղել լայն քաղաքակրթական աշխարհում բնականօրէն չէ եղել մեր հայրենի շրջան: Իսկ Արեւելքի պատմութիւնը մշակութային՝ հոգեւոր-կրօնական և քաղաքական որոշ ձեւեր ունի և միութիւն, որի կառուցման վրայ զարեւ շարունակ աշխատել են բազմաթիւ ազգեր ու ժողովուրդներ: Անկարելի է Հայոց կեանքը իր կրօնական և քաղաքական ձեւերի

մէջ ուսումնասիրել անշատ, մեկուսացած :

Հայոց քաղաքական հալոյոյթի ամենէն բնորոշիչն է միայն փաստը աւատականութիւնն է, նախարարական սխտեմը: Այս սխտեմի ուսումնասիրութեան ներքեւ Ազոնցի մեծագոյն երկը «Հայաստանը Յուստինիանոսի դարում» անունով: Հրատարակած է 1908-ին ուսերէն լեզուով Պետրոգրադի պետական համալսարանի «Բնագիրներ և ուսումնասիրութիւններ» շարքի մէջ: Այս երկով նա հայ նախարարութեան քննութիւնը կապեց պարսկապարթեական պետութեան, աւելի ձիւտ Իրանական աշխարհի քաղաքական զարգացման հետ: Հետադարձում Փրանսիայէն հրատարակած իր աշխատանքների մէջ աւատականութեան հիմքերը որոնեց նաև սեմական աշխարհում՝ Բաբելոնի և Ասորեստանի պետական կառուցումների մէջ՝ համարելով շատ հաւանական, որ Աքամենեանները Պարսկաստանի ձեւաւորման մէջ շատ քան ընդօրինակեցին Ասորեստանից:

Հայ շինականութեան բարդ խնդիրը քննելիս նա ամբողջութեամբ դուրս կուգայ Հռոմի կայսրութեան անկման շրջանի գիւղացիական կարգերից: Կ'որոնէ նրա հիմքերը նաև Հայաստանում: Պարսկապարթեական շրջանի գիւղացիութեան կացութիւնը՝ իրաւական-ընկերային գրութիւնը մեզ անձանօթ է: Բիւզանդիոնի նախնական՝ հողի շուրջն ստեղծուած յարաբերութեան քննութեամբ կարելի կը լինի լուծել նաև Իւրանական աշխարհի գիւղացիութեան բարդ հարցը: Եւ այդ այն պատճառով, որ «Փոքր Ասիան անձանօթ երկիր չէր Իրանական քաղաքակրթութեան: Աքամենեան աշխարհակալների օրերից նա ենթակայ է եղել Իրանի ոչ միայն քաղաքական իշխանութեան այլ և կրիստոտրոպական տնտեսութեան ազդեցութիւնը»:

Հաստատութիւնների և քաղաքական-ընկերային ձեւերի ուսումնասիրու-

թիւնից նա ակ'նոյնի զարգացման ուսումնասիրութեան՝ հայկական միջավայրը և կեանքը սերտօրէն կապակցելով մեր հարեան ազգերի նոյնանման շարժումների հետ: Մօտ երեսուն տարի առաջ նա մէկ մեծ ուսումնասիրութիւն ներկում է «Դիոնիսիոս Թրակացին և նրա հայ մեկնիչները» նիւթին, որ տեղ քննում է հելենիստական մէկ հոսանքի անդրադարձումը հայոց միջավայրում: Աւելի ուշ ուսումնասիրութեան նիւթ է դարձնում «Հին հայոց աշխարհաայեացքը»: Այդ աշխատանքը ներքեւ է ոչ միայն հայոց, այլև Մերձուոր Արեւելի աղիանիկ և սեմական ժողովուրդներին կրօնական աշխարհայեցողութեան: Նա ուսումնասիրում է Արեւելքի «գուղակից Աստածութեանց» տեսութիւնը և նրա հայացի արտայայտութեան ձեւերը: Այս աշխատանքով նոր ուղիներ է բացում և նոր տեսակէտ մշակում մեր հնագոյն շրջանի հոգեւոր կեանքի նկատմամբ:

Արեւմտ ասորիճանարար Ազոնցի քննութեան նիւթը և հորիզոնը կը լայնանայ, կ'ընդգրկէ ամբողջ Արեւելքի մշակութային և քաղաքական աշխարհը: Նախարարական խնդրում նա իր պրպրտումները կատարում է Իրանական աշխարհում, շինականութեան հարցում՝ համեմատութեան եզր է որոնում նախնական Բիւզանդիոնի մշակած կարգերի հետ, կրօնական պրոբլեմը սերտօրէն կապում է սեմական և աղիանիկ ժողովուրդների գիցաբանութիւնների և հաւատալիքների հետ:

Սակայն այս բոլորի մէջ դարձեալ Ազոնցի գիտական պրպտումների հիմնական խնդիրն է՝ Հայոց պատմութեան հիմքերը որոնել, ամուր պատւանդանի գերայ գնել մեր անցեալի ուսումնասիրութիւնը: Արա համար Արեւելքի մշակոյթի երկու աշխարհները մշտական նրա քննութեան նիւթ են դարձել՝ Բիւզանդական և Իրանականը: Ըստ Ազոնցի

անկարելի է ըմբռնել Հայոց պատմական
կեանքի ընթացքը առանց մօտիկէն ծա-
նօթանալու այս երկու աշխարհների
հետ: Իր ծնունդի և կառուցման առա-
ջին իսկ շրջանէն հայութիւնը զարգա-
նում է Իրանական պետութեան շրջանա-
կում և իր հոգեւոր ու նիւթական ու-
նակութիւնները մշակուում են պարսկա-
պարթեւական միջավայրում: Ուստի
զարմանալի չէ, որ հայոց քաղաքական
կառուցածքի պատկերը գծելիս Ն.
Ազոնցը ընդարձակ ներածական գլուխ
և բազմաթիւ էջեր է ներում Իրանական
աշխարհի պետական ձեւերին: Միայն
այս տւեալներով նա կը փորձէ կառու-
ցանել Հայոց նախարարութեան հոյակապ
շէնքը: Գտնել իրականակեր Հայոց պատմու-
թեան մեջ ահա Ազոնցին հետաքրքրող
պատմագիտական հարցերից մէկը: Սա-
կայն կայ և երկրորդը:

Կայ Բիւզանդական նպաստը: Նրա
հետ սերտօրէն կապւած է մեր միջնա-
դարեան մշակութային և քաղաքական
կեանքը: Հաստատութիւնների, զաղա-
փարների թափանցումը երկուստեք է:
«Քրիստոնէական մշակոյթին հաղորդա-
կից լինելով Հայաստանը դարձաւ ըն-
դարձակ Բիւզանդական աշխարհի մէկ
մասը»: Ըստ Ազոնցի Բիւզանդական կայս-
րութիւնը ոչ ազգագրական, ոչ կենցա-
կային, ոչ էլ մշակութային միութիւն էր:
Նրա կառուցման վերայ աշխատել
են յոյներ, հայք, սլաւոնք, Բալկան-
եան և Փոքր Ասիայի բազում ցեղեր ու
մոլոփուրդներ: Իւրաքանչիւրը տւել է իր
ոգեկան ուժը, իր բազկի զօրութիւնը,
իր զիւնանադիտական ձկունութիւնը: Նա
արգիւնք է կայսրութեան մէջ սպրոդ
ազգերի ընդհանուր ձիգի և աշխատան-
քի: Յոյնը միայն ստաշին տեղը կը զը-
րաւէ իր հոգեւոր արժէքներով, լեզուով:
Կայսերական շէնքի այս բազմադամ
կառուցողներից հայութեան դերը ան-
արժեք չէ: Նա իր ստեղծագործ ուժերը
արամազդրեց Բիւզանդիոնին՝ քաղաքա-
կան, կրօնական, զբոսական և ազգային

մարզերի մէջ: Սկսած V-VI դարերից
հայութիւնը մեծ զանգւածներով կը
հաստատուի կայսրութեան հողերի վերայ,
իսկ IV դարի վերջից հայկական հողե-
րի մէջ մասն էլ կայսրութեան սահմաննե-
րի մէջ էր: Միւս կողմից հայոց քաղա-
քական և կրօնական կեանքը խորապէս
ներշնչւած է Բիւզանդիոնից՝ նրա լեզ-
ւից, զբականութիւնից, ճարտարապե-
տութիւնից և եկեղեցական հաստատու-
թիւնից: Ազոնցի երկրորդ գլխաւոր խն-
դիրն է որոնել և գտնել Բիւզանդական
Հայոց պատմութեան մեջ եւ հայկական
Բիւզանդական պատմութեան մեջ: Վերջին
տարիները նա իր գրական հսկայ կարո-
ղութիւնը և հմտութիւնը նւիրեց այս
խնդրի ուսումնասիրութեան: Ազոնցի
համար այս լու տեսական քննութեան
խնդիր չէ, այլ և մէկ շատ կարեւոր
հարց՝ ցոյց տալ և որոնել հայութեան ըն-
դաստը՝ տրւած համաշխարհային մշա-
կոյթին: Իր բազմաթիւ ուսումնասիրու-
թեանց մէջ, որոնք տպւած են մասամբ
«Հայրենիք» ամսագրում, մասամբ Բէյ-
ջիկայի արքայական Ակադեմիայի
mémoires-ների, ինչպէս և Byzantion-
գիտական հանդէսի մէջ, նա յեղաշրջում
է Բիւզանդագիտութիւնը, երեւան հա-
նելով այն մեծ տուրքը, որ տւել է հա-
յութիւնը Բիւզանդիոնին դարերի ըն-
թացքում:

Ազոնցը ուսումնասիրութեան նոր
նիւթ է բերում և նոր մօտեցում,
նոր մեթոտ մեր պատմագրութեան մէջ:
Մինչև Նախորդ դարի վերջերը մեր
պատմագրութիւնը երկու նիւթ ունէր,
որոնց վերայ աշխատել էին մի քանի սե-
րունդներ: Մէկը՝ Հայաստանի արտաքին
քաղաքական դէպքերի նկարագրութիւ-
նը, բայց ոչ հայոց քաղաքական կեան-
քին հոլովոյթը, նրա ստատիստիկական
կեանքի զարգացումը: Ներանք դէպքերի,
զիւզածոների վերայ ուշք կը դարձնէին
իսկ սրանք կապւում են անձերի հետ՝ թա-
ղաւորների, զօրավարների, որով պատ-
մութիւնը դառնում է կենսագրութիւն:

Դէպքերի տակ մոռացութեան էր արելու մ հաստատութիւնները, դադափարները, դատային յարաբերութիւնները: Միւս հարցը՝ կրօնական-դաւանական էր. որ երկար քննութեան նիւթ է դառնում մեր պատմագէտների կողմից: Ի հարկ է այդ մեր անցեալի շատ կարեւոր խնդիրներից մէկն է, բայց միայն մէկը: Եւ նա իրենով չի պայմանաւորում մեր պատմութեան ընթացքը, այլ ինքը՝ կըծնը՝ դառնալով եկեղեցի, մշակելով իր գաղափարախօսութիւնը՝ յարմարելով է միջավայրին, ազգայնանում է և միայն այդ ձեւով տեղ գրաւում պատմութեան մէջ: Ըստ Ազոնցի «պատմութիւնը մէկ գիտութիւն է, որ պիտի աշխատի տեսալ ժողովրդի անցեալը այնպէս լուսարանի, որ կարելի լինի պայծառ գաղափար կազմել նրա հոգեւոր գիմադի և հասարակական կառուցածքի մասին»: Ինքը Ազոնցը իր բազմաթիւ երկերում քննութեան է առնում հայոց ընկերամէջ՝ դատային և քաղաքական կառույցը, հայութեան մէջ գոյութիւն ունեցող հասարակական հոսանքները, հաստատութիւնները, նրանց իրաւական բնոյթը:

Նիւթի այսպիսի ընտրութիւնը բըղխում է Ազոնցի պատմահայեցողութիւնից: Պատմական-տեսական հարցերով նա չի զբաղւել և շատ դժար է գոյութիւն ունեցող պատմափոխութիւնների հոսանքներից մէկն ու մէկին մօտեցնել նրան: Յամենայն դէպս նա Մարքսիստ չէ, ոչ իր պատմահայեցողութեամբ, ոչ էլ իր մեթոտով: Մի քանի տասնեակ տարիների իր գրական աշխատանքների մէջ ոչ մէկ անգամ Մարքսի անունը չի յիշում: Ազոնցը XIXրդ դարի վերջերի և XXրդ դարի սկիզբների մարդ է. նրա պատմահայեցողութիւնը պոզիտիւստական է. նա դրսւպաշ է. մերժում է ամէկ միտափոխում, փորձից դուրս գտնող ուժ: Ոչ նախախնամութիւնը ոչ որեւէ գերընական ուժ՝ պատմութեան կերտող ազդակներ չեն: Հասարականօրէն ապրող

մարդը և զանգւածն ինքն է կերտում իր պատմութիւնը. նրան օժանդակում է բնութիւնը, մեծ դեր են խաղում շրջապատող ժողովուրդները՝ իրենց հասարակական կառուցածքով, մշակոյթի աստիճանով: XIXրդ դարի պատմագիտութիւնը քաղաքական հարցերին նախում էր որպէս հասարակական կեանքի ձեւերից մէկի վերայ: Պատմական քննութեան նիւթ էր դառնում պետութիւնը, դասերն ու դասակարգերը, տնտեսութիւնը, հողի շուրջն ստեղծւած յարաբերութիւնը, միխօսքով հասարակութիւնը իր բազմապիսի արտայայտութեան մէջ: Պատմութեան ուսումնասիրութեան նիւթը անահման ընդարձակւում է, խորանում: Այս ուղղութեամբ զարգացաւ Եւրոպական և Ռուսական պատմագիտական միաքը՝ խորապէս ազդուելով կեանքի՝ հասարակական, ազգային և դատակարարային շարժումներից: Ընկերականական աշուղտի մօտեցումը յատկապէս շեշտւած տեղ գրաւեց Պետրոգրադի համալսարանի պրոֆէսոր Մարքի երկերում: Նա այս տեսակէտները ներշնչեց և իր աշակերտներին, որոնց թւում և Ն. Ազոնցին: Վերջինս ուրեմն տաճարած հարցերի լուսարանութեան մէջ համակերպական հասարակայնական մեթոտի հայացի աւսնայացնորիւնն է:

Մինչ և Ն. Ազոնցի աշխատանքները մի քանի փորձեր էին կատարւած հայոց պատմութեան հասարակագիտական հիմնաւորում տալու: ՈՏ. Պաշտանեանը նախորդ տարի 80-թւականներին մէկ հատորի մէջ տւեց ամբողջական Հայոց պատմութիւնը: Պաշտանեանը գերման մեծանուն պատմաբան Ռանկիի գպրոցին է պատկանում, որ պատմութեան էական նիւթը պետութեան հոյովոյթն է համարում: Հայութեան քաղաքական կեանքը, թէպէտ անանձին գլուխներ կը նւիրէ նաև հայ տնտեսութեան, վաճառականութեան, գրականութեան: Միւր

հարցի տեսակէտից ուշադրաւ աչի է որ հայ նախարարական սիստեմը նա ըմբռնում է որպէս յարե նման եւրոպական աւատական կառուցւածքին: Սակայն այս խնդիրը նա մտաբանած էր քննում: Նոյն դարի 80-կան թւերի վերջերին Բահաթեան գրում է «Անձնական եւ հոգեւոր իրաւունքը ինչի Հայաստանում» աշխատանքը, հիմնւած մեր պատմագիրներին տըւեալների վերայ: Վ. Վարդապետ Բասաւեանը իր «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց» աշխատանքի նախաբանում ընդարձակօրէն խօսում է հին Հայաստանի ընկերային կառույցի մասին ճիշտ տեսակէտներ յայտնելով: Մ. Գալազեանի «Քննական Պատմութեան» մէջ փաստերը ոչ թէ ճշտուում են, այլ կարելւում են: Եստ ըստ ժխտելով նա զրական քիչ արդիւնքի հասաւ: Հայ նախարարութեան վերաբերմամբ ճիշտ տեսակէտներ երեւան բերեց, բայց նախարարութիւնը չհիմնաւորեց որպէս հայոց քաղաքական պատմութեան սիստեմ: Այժմ այս բոլոր հետաքրքիր կարող են մեզ որպէս հայոց պատմագրական մտքի անցած փուլը: Այն հայկական, այլ ուստական եւ գերման գիտական աշխարհից պիտի դար Հայոց պատմութեան հասարակագիտական բմբռնումն եւ վերլուծութիւնը: Վրացի բանասէր եւ պատմաբան Ջաւախովը 1905ի հրատարակում է «ուսերէն լեզուով «Հին Վրաստանի եւ Հայաստանի պատմական կարգը» անունով նշանաւոր գիրքը: Ջաւախովը Մարտի աշակերտներից է եւ Ադոնցի հասակակիցը եւ գիտական աշխատանքների բնկերը: Նրա վերլուծութեան նիւթը Հայաստանի եւ Վրաստանի տոնական եւ աւատական կառույցի խնդիրն է: Նա գործադրում է Մարտի գլոցում մշակւած բանասիրական եւ հասարակագիտական մեթոտները եւ բոլորովին նոր եզրակացութիւնների յանգում: Դրանից քիչ առաջ գերման արեւելագէտ եւ պատմաբան Գլեքերդը 1900ի Քէնիգսբերգում հրատարակում է «Հռոմեական Հայաստանը


եւ Հռոմեական սաստապարիւնները IV-VI-րդ դարերում» աշխատանքը, որի նիւթը մասամբ նոյնանում է Ադոնցի նշանաւոր «Հայաստանը՝ Գոտտինիանոսի դարում» գրքի նիւթի հետ: Սակայն հայոց հին շրջանի պատմութեան խնդիրները ոչ ոք այն ծաւալով չգրեց եւ այնքան խոր չըմբռնեց, որքան Ադոնցը իր վերոյիշեալ երկի մէջ: Ջաւախովը սահմանափակեց միայն տոնական եւ աւատական կառույցի քննութեամբ, Գլեքերդը զբաղեց Գոտտինիանոսի հայկական քաղաքականութեամբ, Ադոնցը ոչ միայն միացրեց այդ երկու խնդիրները, այլեւ նրանց հետ կապւած բազմաթիւ հարցեր գրեց, որոնցից իւրաքանչիւրը ուրոյն պատմագիտական խնդիր է եւ լուսարանում է մեր պատմութեան մութ կողմերը: Նոյնիսկ յիշւած նիւթերի մշակման մէջ շատ մեծ տարբերութիւն կայ գերման գիտունի եւ Ադոնցի մէջ եւ այդ ոչ ի շահ գերմանացի: Թէ աղբիւրների վերլուծութեան, թէ նիւթի մշակման եւ թէ եզրակացութիւնների մէջ երեւան կուգայ Ադոնցի արտակարգ հմտութիւնը, ընկերաբանական մեծ պատրաստութիւնը, հսկայ գիտական պաշարը եւ համադրելու մեծ կարողութիւնը:

Ն. Ադոնցի պատմագիտական եւ բանասիրական աշխատանքները կառուցւած են անորձական աղբիւրների՝ դասական գրականութեան հիման վերայ: Անտանման է նրա մտտեղաբանական ծանօթութիւնները եւ այն էլ մտքի բոլոր սուղարեգններում՝ կրօնի, գիցարանութեան, պատմութեան, հին օրէնքների, ընկերային կեանքի եւ զրականութեան մէջ: Նա մէկ կենդանի հանրագիտարան է: Իր բոլոր աշխատանքները գրւած են յուն, հայ, վրացի, պարսիկ, արաբ, լատին աղբիւրների վերայ, իր գաղափարի բնկերները, իր օժանդակները հին եւ վիշակներն են, օրէնքների ժողովածուները, կայսերական հրահանգները, ուղեգրութիւնները:

բը: Հայ-Բիւզանդական պատմութեան ներքեւ աշխատանքները միայն յոյն լեզուով գրեւած աղբիւրների վերայէն կառուցուած, ինչպէս և «հին հայոց աշխարհահացքը» ուսումնասիրութիւնը: Եւ պէտք է ի նկատի ունենալ, որ Ն. Ազոնցը աղբիւրների կողմ հետեւող չէ: Ըստ նրա հին հեղինակները ամենից քիչ մտածել են ճշմարտութիւնը տալու մասին, նըրանք միտումնաւոր են, միտադնում են իրականութիւնը: Պէտք է խիստ քննութեան ենթարկել հիներին և միայն բանասիրական և պատմական քննութիւնից յետոյ ծառայեցնել նրանց որպէս աղբիւր: Ազոնցն այս բոլորը կատարում է մեծ հմտութեամբ: Բանասիրական և քննական այդ մօտեցումը կատարել է Փառաստոս Բիւզանդի, Խորենոսը, Ղեւոնդի նկատմամբ, որոշելով նրանց պատմական աղբիւր լինելու չափը:

Նորագոյն պատմաբաններին նա շատ քիչ բան է պարտական: Ամենից շատ Մարրին, որից իւրացրել է բանասիրական և ընկերաբանական մեթոտը: Եւրոպական պատմագիտներից նրան ուղեցոյց է հանդիսացել Ֆիլաւսի չը կոչւածը, որ բանասիրական մեթոտը կիրարկեց աւատական կարգը քննութեան ենթարկելիս:

Ֆէստալական կարգը, որպէս ընկերային ուրոյն ձև, բնորոշելիս օգտուում է Լուչերի աշխատանքներից և նրա հիման վերայ համեմատում է հայ և ֆրանսական աւատականութիւնը: Հին կրօնական աշխարհայեցողութիւնը ուսումնասիրելիս Ֆրայցիերի տեսութիւնը ի նկատի ունի, որ Մերձաւոր Արեւելքի զուգակից Աստուածութեանց մեծագոյն տեսարանն է: Հայ նորագոյն պատմաբաններէն կր լիչէ միայն այն դէպքում, երբ հին Հայաստանի ընկերային կեանքին վերաբերող այս կամ այն խնդիրը պէտք է լուսաբանել: Այսպէս օրինակ «Հին հայ շինականութիւնը» բովանդակալից յօդուածաւորը ներքեւ է Յ. Մանուկեանի մէկ ընդարձակ ուսումնասիրութեան, որ հրատարակել է «Հայաստանի պետական համալսարանի գիտական տեղեկագրի» առաջին զրքում: Ֆրանսական նորագոյն պատմաբաններից մի քանի անգամ լիւում է Գրոցիւ, յատկապէս նրա վերջին աշխատանքներէն մէկը՝ «Եկեական քաղաքակրթութիւնը», իսկ բիւզանդագէտ պատմաբաններից արժեքաւորում է Շարլ Դիլին և անգլիացի Բէրլին:



Մ Ե Թ Ո Ւ Ը

Ն. Ազոնցի պատմագիտական հետազոտութեան մեթոդը բազմազան է՝ համապատասխան նիւթին և հետապնդած նպատակին։ Ըստ նրա պատմութիւնը «ամենէն առաջ գործողութիւնները շարուն է» ժամանակի և տարածութեան մէջ կատարուող Պատմութեան ամենէն էական հարցերից մէկն է՝ ուսումնասիրել այդ «գործողութիւնները», փաստերի ծագման և հոլովոյթի խնդիրը։ Այստեղից էլ գեներալ իսկ ծագումն մերոյի անհրաժեշտութիւնը։ Պատմական երեւոյթները ծագման հարցը պատահական հետաքրքրութիւն չէ, ինչպէս ճշտօրէն նկատուած է Ֆիւստէլ Դը Կուլանժը, այլ պատմութեան իսկ էութիւնից բղխող հետեւանք։ «Նա պատմական մեթոդի ամենէն անհրաժեշտ մասն է, պատմութեան ամենէն կարեւոր օրէնքներից մէկը»։ Եւ ինքը՝ Ֆ. Դը Կուլանժը պատմական փաստերի ծագման այդ մեթոդը կիրառուած է Արեւմտեան Եւրոպայի և յատկապէս Ֆրանսիայի պատմութեան ուսումնասիրութեան մէջ։

Գեներալ մերոսը կ'որոնէ պատմական երեւոյթների սակմը, արմատները, փաստերի նախնական գրութիւնը և նրանց զարգացման աստիճանները։ Այս մեթոդը արտակարգ արժէք ստացաւ հասարակագիտութեան մէջ, որ XIX-րդ դարի համադրական մտքի արդիւնքն էր։ Նրա մէջ նոյնիսկ ստեղծւեց յատուկ ճիւղ «ժողովուրդների հասարակագիտութիւնը», որ ուսումնասիրում է նախնական ժողովուրդների համակեցութեան ձեւերը և մշակոյթի սակմերը։ Այս տեւալներով լուսարանեց Աֆրիկայի, Աւստրալիայի և ուրիշ երկրամասերի ու կղզիների յետադան և վայրենի հասարակութեանց կեանքը՝ կրօնը, արեւտոր չեղուն, իրա-

ւունքը։ Այս կարգի իմացութեան շատ նպատեց նաեւ Մերձաւոր Արեւելքում կատարւած պեղումները, հին ժողովուրդների գրերի բնութեցումը, որոնք լոյս սփռեցին պատմութեան հնագոյն շրջանների վերայ և երեւան հանեցին այդ ժողովուրդների կեանքը իրենց սկզբնական վիճակում։ Այս բոլոր տեւալները՝ հին՝ մեռած և նոր՝ կենդանի յետադան հակեցութեանց քննութիւնը նոր տեւալներ էին ուրաւգծելու բնդհանրապէս մարդկութեան հոլովոյթի նախնական աստիճանները։ Հասարակագիտութիւնից այս մեթոդը մտաւ պատմագիտութեան մէջ և դարձաւ նրա անհրաժեշտ մասը։ Ն. Ազոնցի գեներալի, ծագումն մեթոդը կիրառեց հայոց պատմութեան մէջ։ Ասացինք, որ Յուստինեանոս կայսեր դարի Հայաստանի պատմութեան նա ներում է իր ամենամեծ աշխատանքը։ Նրա հետազոտութեան խիշրդ հայոց նախաւարական կարգն է։ Սակայն բնկերային այդ հիւսւածքը VI-րդ դարում արդէն քայքայուած էր։ Բայց առանց նախաւարական կարգի մանրազնին քննութեան անկարելի է հասկանալ և արժէքաւորել Յուստինիանոսի հայկական քաղաքականութիւնը ևս առաւել՝ առանց նախաւարական սխտմի ըմբռնումի անկարելի է հասկանալ հայոց պատմութիւնը և իմաստաւորել այնտեղ կատարուող գէպքերը։ Ուրեմն պէտք է գէպի Արտաշէսեանների դարը, երբ սաղմաւորուած էր նախաւարական կարգը, գէպի Արշակունիները, որոնց հետ սերտօրէն կապուած է հայոց նախաւարութեան ոսկեդարը։ «Նրա վրայ նրա տած է Արշակունիների կնիքը» ինչպէս ասում է Ազոնցը։ Այստեղից էլ բղխում է՝ նրա գեներալի մեթոդի կիրառումն նախաւարական կարգը քննելու։ «Հայաս-

տանը Գուստինիանոսի գարուն՝ գիրքը գրեթէ ամբողջութեամբ այդ մեթոտով է կառուցւած՝ օժանդակ ունենալով համեմատական մեքսիկէն։ Այստեղ նա լուսարանում է հայոց հասարակական զարգացման երկու փուլերը, նախարարական տոհմերի թիւը և ռազմական արժէքը, հայոց եկեղեցու ծագումը, վարչութիւնը, եկեղեցու ազգայնացումը՝ որ նախարարական միջավայրում՝ կը նշանակէր աւատականացում։ Այս մեթոդով նա փորձում է գծել Արտաշեսեան և Արշակունեաց դարերի Հայաստանի սահմանները, ժամանակի ընթացքում կրած փոփոխութիւնը, հայութեան որպէս ուրոյն ազգութեան ծագման հարցը, նրա ազգագրական կազմը, նրա մշակութային և տերիտորիալ տարածման ուղղութիւնները։ Մի խօսքով քննութեան է ենթարկում բոլոր այն հարցերը, որոնք հիմնաքարերն են հայոց պատմութեան։ Գնահատիկ մեթոտը անպայման պիտի լինի քննական. նա քննութեան պիտի ենթարկէ աղբիւրները՝ միայն ճշմարտութիւնը երեւան հանելու նպատակով, մանաւանդ երբ հարցը հին պատմութեան աղբիւրների մասին է։

Ն. Ագանցը վերջին տարիները գնեստիկ մեթոդը կիրառեց մի շարք հայ նախարարական տնրերի ծագումը որոշելու։ Այսպէս Ռուբինեանների, Բագրատունիների և Մամիկոնեանների ծագումն և պատմական գերին ներքում է առանձին աշխատանքներ հայերէն և ֆրանսերէն լեզուներով։ Նոյն մեթոտով նա ուսումնասիրում է այն հայ նախարարութիւններին ծագումը և գործը, որոնք որոշ գերին կատարել Բիւզանդական կայսրութեան մէջ։ Գնեստիկ մեթոտով է, որ յայտնագործուած է հայկական զանգուածի գերը Բիւզանդական կեանքում։

Այս մեթոդը, որքան և անհրաժեշտ՝ միայն չէ նրան կից է և լրացնում է լատինատիրական կամ ֆիլոլոգիկ մեթոտը։ Լեզուն իր մէջ ունի հասարակական կեանքի և մը-

շակոյթային ձեւերի պատկերը, նա մըշակում է բառեր, տերմիններ, որոնք ընկերային և քաղաքական գրութիւններ են բնորոշում։ Մեր գրերի գիւտից յետոյ մէկ անգամ ձեւաւարած տերմինները մտել են գրականութեան մէջ. բայց նրա ստեղծող հասարակական միջավայրը կերպարանափոխել է։ V-րդ դարից սկսած նախարարական կարգը կը դիմէր գէպի անկում, ուստի հին տերմինները մնալով գործածութեան մէջ յաճախ նոր իմաստն ստանում։ Այդ աւելի ցայտուն է երեւում, երբ հասարակութիւնը տոհմական կարգից անցնում է դասային կարգին։ Տոհմական կարգի մշակած տերմինները մնում են, սակայն ստանում են նոր բովանդակութիւն։ Բանասիրական մեթոդից օգտուող միշտ այս հանդամանքը ի նկատի պիտի ունենայ։ Բացի դրանից հայ հին գրականութիւնը մեկ շատ քիչ նիւթ է մատակարարում մեր ընկերային ու քաղաքական կառույցը ճանաչելու համար։ «Հայ մատենագրութիւնը որքան ծեր, աւելի մանուկ է, քան նախարարական կարգի հիմնական հիւսւածքը... Հի կարելի ասել, որ անգամ անգրանիկ հայ պատմական գործերը փայլում են նախարարական նիւտ ու կացի գիտութեամբ։ Լաւագոյն պատմիչը՝ Բիւզանցը, կամ ծլատ է կամ շատ տեղեակ չէ»։ Ուստի մեր գրականութեան մէջ պահւած «պատմական կարեւոր տերմինները կորսնում են իրենց անհատականութիւնը ճարտասանական խառն ու շփոթութեան մէջ։ Կանգնել ներանց երբեմնի ուրոյնութիւնը, որոշել նրանց տեղը հասարակական կազմի մէջ գծուար խնդիր է»։

Չնայեա՞ծ այս բոլորին, Ագանցը իսպառ չի մերժում բանասիրական մեթոդի արժէքը։ Նա միայն որոշում է նրա հետ կապւած գծուարութիւնները, որի պատճառով և օժանդակ դեր է տալիս նրան։ Հէնց ինքը հին հայոց ընկերային և քաղաքական կեանքը լուսարանելիս

շարունակ այդ տերմինների, բառերի, քննութեամբ է դրադեած։ Նա փորձում է մեկնարանել նրանց իմաստը. բառերի միջոցով պատկերացնել հասարակական կեանքը, դասային յարաբերութիւնները։ Այդ մեթոդը նա կիրառեց հայոց տոհմական և նախարարական շրջանի՝ պատմութեան վերայ և ճշդեց բազմաթիւ տերմիններէ պարունակած հասարակական բովանդակութիւնը։ Թէ որքան անհրաժեշտ է համարում Ն. Ալոնցըը նիւթին յայտնելի մօտենալը ցոյց է տալիս և այն, որ նա մէկ ամբողջ հատոր՝ «Անուգարանակալն ուսումնասիրութիւններ» անունով՝ ներկել է այդ խնդրին, բայց չի հրատարակել։

* * *

Եթէ «մատենագրական համեմատութիւնները բաւարար միջոց չեն դրական արդիւնքի յանգելու, ապա հարկաւոր է ուրիշ օժանդակ մեթոդ, առաջնորդող տեսական հայեացք»։ Եւ այդ հաւանականութիւնն է։ Այդ մեթոդը ամբողջացնում լրացնում է գեներալի մեթոդի աշխատանքը։ Մէկը նայում է խորքը, որոնում է պատճառները, երեւոյթների արմատներն է քննում, միւսը այդ ձեւով գտած և ստուգեւած փաստերի համար՝ համեմատութեան եզր է որոնում այլ ժամանակներում և միջավայրում տեղի ունեցած նոյնանիշ երեւոյթների հետ։ Համեմատական մեթոդի նպատակն է՝ դեռ ևս չուսումնասիրեւած, չը մեկնաբանեւած և մութ մնացած հարցերը լուսարանել արդէն ծանօթ ու մեկնաբանեւած փաստերի օգնութեամբ։ Մէկ տեղում մշակեւած տեսակէտները կիրառել մէկ ուրիշ ժամանակի և տարածութեան մէջ պատահած երեւոյթների վերայ։ Այս մեթոդի կիրառումն հնարաւոր է միայն այն պարագային, երբ համեմատութեան զբաղ փաստերի, երեւոյթների մէջ ընդհանուր գծեր չկան և հիմնական

ու բնորոշիչ՝ այդ երեւոյթները հասկանալու համար։ Համեմատական մեթոդը նոյնանման և նոյն արժէք փաստերի վերայ է կառուցեւած։ Այս մեթոդի կիրառումն պատմաբանից պահանջում է պատմագիտական և հասարակագիտական ընդարձակ, խոր և լուրջ պատրաստութիւն, լայն աշխարհայեացք։ Ըստ որում պատմաբանը չի կարող մնալ իր մասնագիտութեան նեղ սահմաններում։ Նա խորագննին ծանօթութիւն պիտի ունենայ մշակոյթի և քաղաքական պատմութեան անցած փուլերի, որովհետեւ միայն այդ ձեւով հնարաւոր է համեմատական մեթոդի արդիւնաւոր կիրառումն։ Այդ մեթոդը ուսումնասիրութեան նիւթը հանում է նեղ, մեկուսացած շրջանակից և դնում է աւելի լայն, ընդարձակ գետնի վերայ և մեկնաբանում է համաշխարհային պատմութեան լոյսի տակ։

Այդ մեթոդի՝ կիրառումն պատմահասարակական հարցերի լուսաբանութեան մէջ հին է, սակայն այն վերին աստիճանի արդիւնաւոր եղաւ միայն XIXրդ դարում հասարակագիտութեան, որպէս ուրոյն գիտական ճիւղի հիմնաւորումով։ Այդ մեթոդով քննութեան ենթարկեց յետաձգած ժողովուրդների ընկերային և հոգեւոր-մշակոյթի աշխարհը, այդ մեթոդով լուսաբանեց Մերձասոր Արեւելքի պատմութեան շատ մութ խնդիրներ և նրա տեւաշնորով հնարաւոր եղաւ ուրաւագծել մարդկութեան հոլովոյթի փուլերը և կատարել արժէքաւոր ընդհանրացումներ։ Գեներալի և համեմատական մեթոդները անհրաժեշտ հիմք են ժամանակից ընկերային գիտութիւնների, հետեւապէս և պատմութեան։

Համեմատական մեթոդից օգտուում է Ալոնցըը գրեթէ իր բոլոր աշխատանքների մէջ։ Հայոց կեանքի համեմատութիւնը պիտի կատարւի պատմական այն միջավայրի հետ, որի մէջ ապրել է և

կազապարել է հայութիւնը: Ըստ Ն. Ադոնցի «Նախարարութիւնը քաղաքական-ընկերային հաստատութիւն է: Նրա արմատները պիտի որոնել Իրանական պետութիւնների ընդհանուր քաղաքական և ընկերային պայմանների մէջ: Հայաստանի կեանքը զարգացաւ այդ միջավայրում, ուստի պէտք է որ կազապարէր Իրանի հետ միեւնոյն պետական-իրաւական գաղափարների և նորմերի ազդեցութեան տակ: Բնութագծւումով Իրանական պետականութեան հիմերը, մենք կ'ունենանք այն յենարանը, որ մեզ հնարաւորութիւն կը տայ համադրելու նախարարութեան վերաբերող ցրւած նիւթերը և կառուցել նրանից մէկ ամբողջութիւն»:

Այստեղից էլ Ն. Ադոնցի գլխաւոր հարցերից մէկը՝ Իրանական տարրերի որոնումն Հայոց պատմութեան մէջ: Այս հարցը ըստ նրա քաղաքական է և ընկերային: Առաջինը՝ ուսումնասիրել է Ն. Ադոնցը իր ամբողջութեան մէջ՝ իրկրորդի՝ Իրանի ընկերային կառուցւածքի վերաբերող նիւթերը պակասաւոր են, ուստի նա դիմում է այլ աղբիւրների այդ հարցը քննելու: Արդէն կառուցւած և ամբողջացած նախարարական սիստեմը՝ Ադոնցը փորձում է գնել Եւրոպական պատմութիւնից մեզ յայտնի հասարակական և քաղաքական ձեւերի տակ և բնորոշել այն ընդհանուր պատմական տերմիններով: Այստեղից էլ նախարարութեան մանրագնին համեմատութիւնը Եւրոպական աւատական կարգի հետ, մասնաւորապէս՝ Ֆրանսական աւատական դրութեան, որ ամենէն բնորոշին է Միջնադարեան Եւրոպայում: Այս աշխատանքը նա կատարում է Լուււէրի արդէն դասական համարւած *Manuel des Institutions Françaises* - գրւածքի վերայ: Նոյն համեմատական մեթոդը նա կիրառում է հայոց հին կրօնական աշխարհայեացքը ուրւագծելու: Այդ բանը անկարելի է առանց առնչութեան մէջ

գնելու այն՝ մեր հարեւան ժողովուրդների հոգեւոր կեանքի հետ: «Հայ յիշողութեան հնաւանդ փշրանքները՝ հարեւան երկիրներում տարածւած պաշտամունքների լոյսի տակ կը ստանան իրենց ամբողջութիւնը և կարող կը լինեն վերականգնել մեռած աստուծների պատկերները»:

Այս ձեւով Հայոց պատմութեան փաստերը, մասնաւորապէս մեր նախա-րարական կարգը ժամանակակից գիտական տեսակներով ենթարկեց մանրագրնին քննութեան: Իրեւնոյն կարգի վերայ դասեց համալսարնային պատմութեան նոյնանիշ փաստերի հետ: Հայոց պատմութիւնը մտաւ ընդհանուր պատմութեան քաղաքական ոտք, մասնաւորապէս լուսնի տակ և ստացաւ նոր իմաստ: Այս աշխատանքը մենք պարտական ենք Ադոնցին:

* * *

Հասարակական երեւոյթներին կարելի է նայիլ կամ իրենց կայունութեան կամ շարժման մէջ: Առաջին դեպքում մեզ կը հետաքրքրէ հասարակութեան կազմիչ տարրերը, բաղադրիչ մասերի ներքին կապը: Կայուն կամ *ստատիկ* դրութիւնը կը զբաղէ մարդկային հասարակութեան գոյութեան պայմաններով: Նրա էական հարցը ընկերային փաստերի հաւասարակշռութեան խնդիրն է: Այսպիսի քննութիւնը անհրաժեշտօրէն պիտի լինի նկարագրական: Երկրորդ դեպքում մեզ կը հետաքրքրէ երեւոյթների անցած փուլերը, փաստերի հոլովոյթը և այն պատճառները, որ առաջ կը բերեն այդ հոլովոյթը: Այս մեթոդը կոչւի *ուսումնաքն* մէջ է, որ մանրամասն մշակման ենթարկեց և մնաց հասարակագիտութեան հիմնական տարրերից մէկը: Եթէ *ստատիկ* զբաղում է հասարակական փաստերի կայուն կացութեամբ, հաւասարակշռութեան խնդրով, ապա *դինամիկ*

դրադուում է հասարակութիւնների յաջորդական փութերի և նրան նպաստող դործօնների ուսումնասիրութիւնում: Վերջինս մասամբ նոյնանում է գենետիկ մեթոդի հետ, որքան նա լուսարանում է ոչ միայն փաստերի, գործօնների ծագումը, այլ և նրա զարգացման յաջորդական աստիճանները: Ն. Ադոնցը հին հայոց կեանքը կը քննէ կայուն և ստատիկ կացութեան մէջ, նրա զննութեան նիւթն է Հայոց պատմութեան հիւսւածքը, նրա բաղադրիչ մասերը և այդ մասերի փոխադարձ կապը: Նրա մեթոդը նկարագրական է: Նա նկարագրում է հայ նախարարութեան պատկերը, ջանում է համեմատութիւնների միջոցով ճշմարտագոտում փնէր, որքան հնարաւոր է: Այդպէս է վարում նաև հայ ինտելիգենտութեան խնդիրը քննելիս: Նրա նիւթը որոշ չրջանի պատմական փաստերի նկարագրութիւնն է և նա քննում է հին հայոց գասային կազմը, նրա իրաւական, արտոնական և քաղաքական զրութիւնը, հայոց եկեղեցու տեղը նախարարական սխաւումի մէջ: Ն. Ադոնցը վարպետ ձեռքով գծում է հայոց հասարակութեան աւանդակը. նա կատարում է անալիտիկ, վերլուծական աշխատանք և այդ ասպարիդում անմրցելի է: Սակայն նրա արածը պատմագիտական աշխատանքի մշայն մէկ դէմքն է: Նկարագրութիւնը մէկ անհրաժեշտ մասն է պատմական վերլուծութեան: Նրա մէջ երեւան պիտի գայ պատմաբանի արուեստագիտական կարողութիւնը, վառ, գունեղ պատկերների մէջ գծելու ժամանակը, գէպքերը, գէմքերը: Սակայն որքան և անհրաժեշտ նա կրտատ կը մնայ եթէ պատմութիւնը չգառնայ հասարակական կեանքի հոլովոյթ, եթէ նա չլնանայ մարդու միջոցով և նրա կարողութեամբ կերտւած մշակոյթի տարրերի յաջորդական փութերի վարգացումը լինել: Պատմութեան շարժումն, զինտմիկ այս մասով Ադոնցը չի զրաւել:

Նա որոշել է մեր պատմութեան հիմնական գործօնները, յուզող ուժերը, բայց չի տեւել այդ ուժերի հոլովոյթը ժամանակի և տարածութեան մէջ, նա չի տեւել Հայոց պատմութիւն (Միայն մի քանի յօդածներ կ'մէջ նա փորձել է այս կամ այն հայոցի պատմական փութերը տալ, բայց զրաւք լոկ րնդհանրացումներ են: Ասայինք, որ նա գենետիկ մեթոդը կիրաւում է մի շարք հայ նախարարութիւնների ծագումը որոշելու ասակայն ոչ մէկ նախարարական տան յաջորդական պատմութիւնը նա չի տեւել: Գենետիկ մեթոդը նա գործադրել է բառի նեղ իմաստով՝ միայն ծագումը քննելիս: Նա չի գրել հայոց նախարարական չրջանի պատմութիւնը որքան վերջինս պիտի հասկաւարդէր գէպքերի, «գործողութիւնների» չընդմիջող և փոխադարձօրէն կապւած մէկ շարք: Արեւ է մէկ քանի ընդհանրացումներ, օրինակ՝ «Բագաքական հասանքները հին Հայաստանում» յօդւածի մէջ, բայց վերջինիւ իմաստով այն պատմութիւնն է, այլ տատնամեակների կատարած պըրպըրտումների շատ թուցցիկ ընդհանրացումներ:

Ինչն է որա պատճառը.

Կարծում ենք թէ այդ հետեւանք է այն բանի, որ հայոց պատմութիւնը որպէս մշակւած, պատրաստի գիտական ճիւղ գոյութիւն չունի: Հայոց պատմագիտութիւնը զեռ ապրում է նիւթերի հաւաքման, մենագրական աշխատանքների չրջանը: Հայոց պատմագրութիւնը զեռ նոր է, որ հասարակագիտական տնտակէանք է մշակում և կիրաւում մեր պատմութեան ուսումնասիրութեան մէջ: Մեր պատմագիտութեան նիւթերը ցրւած են, չ'ուսումնասիրւած, հուս գրութեան մէջ: Այտք է ամեն ինչ հաւաքել, ձեռագիրները պէտք է հրատարակել, մեր երկրում ցրւած արձանագրութիւնները պէտք է լրացնել և անթերի կարգաւ,

քննական ուսումնասիրութեան նիւթ դարձնել այն: Այս աշխատանքներից յետոյ միայն կարելի է գրել Հայոց պատմութիւնը: Եւրոպայում նիւթերի հաւաքման այս գործը կատարւել է XVIIրդ դարից սկսած, մեզ մօտ նոր է սկսել: Վիէնայի, Վենետիկի Միսիթարեան Հայրերը, առանձին բանասէրները շատ արժէքաւոր աշխատանքներ են կատարել այդ մարզի մէջ: Հայ և օտար պատմագէտները մոնոգրաֆիկ — մենագրական կարեւոր ուսումնասիրութիւններ են արել, սակայն դրանք բոլորը միայն նիւթեր են Հայոց պատմութեան չէնքի ամբողջական կառուցման համար, որ ապագայի գործ է: Ամէն կառուցում մասնակի հետազօտութիւնների արդիւնք է

լինելու: Ն. Աղոնցը իր ամբողջ կեանքում նիւթեր էր հաւաքում, մեծ և փոքր մենագրական աշխատանքներ էր կատարում, թւեր, փաստեր, դէմքեր, հոսանքներ էր ճշտում, անձերի, դէպքերի տեղերը և գերն էր որոշում, այն համագրական գործի համար, որը պիտի կոչւէր Հայոց պատմութիւն: Ն. Աղոնցի դժբախտութիւնն այն էր, որ միաժամանակ բանասէրի, նիւթեր հաւաքողի, ձեռագիրներ հրատարակողի, մասնակի փաստեր քննողի աշխատանք պիտի անէր և երազէր, թէ մի գուցէ գայ մէկ օր, որ ինքը կը տեսնէ իր տասնամակնների աշխատանքի պտուղը, կը զրէ գոնէ հին և միջնադարեան Հայոց պատմութիւնը:



Ս Ի Ս Տ Ե Մ Ը

Փիլիսոփայական, բնագիտական և պատմական ամեն սխտեմ տրամաբանական մտքերի ամբողջութիւն է, որի մէջ գաղափարները միանում են իրարու հետ ներդաշնակ և համադրող ձևով։ Ամեն սխտեմ մտքերը հաւաքում է մէկ սկզբունքի, հիմնական գաղափարի շուրջը, որ դառնում է երկիւղ, տեսանկիւն առաջադրած հարցերի լուսարանութեան համար։ Այդ սկզբունքը՝ աշխարհի և պատմութեան վերայ նայելու այդ տեսակէտը, «աշխարհայեացքը» բերում է ուսումնասիրողն ինքը, փիլիսոփան, պատմաբանը, բնագէտը։ Այդ նրա տեսակէտն է՝ մշակուած իր պըրպըտումներով, իր ապրումներով, ոգեկան ուժերով։ Ուստի ամեն սխտեմ որոշափով ենթակայական է՝ կապւած մեր հոգեւմտաւոր կեանքի, հետաքրքրութեան և համադրելու մեր ունակութիւնների հետ։ Իրականութիւնը՝ լինի այն տիեզերական թէ պատմական, անհունօրէն բազմազան է, բազմերանգ, բարդ. ուսումնասիրողն է, որ բազմազանութեան մէջ կարգ է մտցնում, նրանց մէջ ընտրութիւն կատարում, համադրում և մշակում իր սխտեմը։

Ամեն մէկ գիտուն — պատմաբան ունի իր պատմագիտական սխտեմը։ Ճիշտ է նա ուղղուած է գէպի փաստերը և այնքան արժէքաւոր է, այնքան ճշգիւ, որքան աւելի շատ գէպեր և երեւոյթների մեկնաբանել կարող է, սակայն ամբողջական և ներդաշնակ պատմագիտական սխտեմի կերտողը ինքը պատմաբանն է։ Փաստերը ներք են ստեղծ

ծաղործութեան համար, միաժամանակ սահման՝ պատմաբանի ստեղծաղործելու կարողութիւնը իրականութեան կապելու, իրապաշտ դարձնելու նրան։ Պատմաբանի անհատականութիւնը, հետաքրքրութիւնը, գաղափարներն ու շահերը խորապէս ազդում են փաստերի ընտրութեան և մեկնաբանութեան վերայ։ Այստեղից էլ պատմագիտական սխտեմների բազմազանութիւնը, պատմափիլիսոփայական ուսմունքների փոխադարձ ժխտումն ու պայքարը, երբեմն էլ համադրութիւնը։

Այս բանը մենք պէտք է ի նկատի ունենանք, երբ խօսում ենք Ն. Ազոնցի պատմագիտական սխտեմի մասին։ Եթէ նա չուրջ յիսուն տարիների իր գիտական աշխատանքների մէջ չառնէր ամբողջական կամ հին չըջանի Հայոց պատմութիւնը, ապա զրա փոխարէն նա առաջին հայ պատմագիրն է, որ մշակել է ժամանակակից ընկերաբանութեան և պատմագիտութեան աւելանքով հայոց պատմութեանը պատրաստ էր արդէն 1908-ին հրատարակած «Հայաստանը Զուստինիանոսի գարում» մեծ աշխատանքի մէջ։ Հետագայում նա միայն աւելի հիմնաւորեց և լրացրեց այնտեղ մշակած իր տեսութիւնը։

Ն. Ազոնցի սխտեմի հիմքում ընկած է հին Հայաստանի քաղաքական և ընկերային կեանքի նկարագրութիւնը։ Այդ հատարակութիւնը յաջորդաբար անցել է երկու փուլերով՝ տնտեսական և նախադասական։ Առաջինը ապագասպին համա-

կեցութիւն է և նախորդում է երկրորդին՝ նախարարականին, որ դասային կառույց է։ Ուրեմն Ն. Աղոնցի նիւթն է զծել հայրենական տնտեսական անդամակարգ համակեցութեանը՝ նախարարական՝ զառային հասարակութեան անցնելու հոլովոյրը։

Արանով իհարկէ Ն. Աղոնցը չի որոշում, որ տոնմական կարգը մարդկային համախմբումն նախնական և առաջին աստիճանն է։ Բայց տոնմական կառույցը այն համախմբումն է, որի մասին թէպէտ և պակասաւոր, բայց և անպէս գրաւոր լիզողութիւններ կան. ապա տոնմական կարգը ամբողջ արեւելքում հանդէս է գալիս որպէս մնայուն հասարակական կազմակերպութեան ձև։ Նա կ'ընդունի, որ տոնմական կարգից առաջ մարդկային համախմբումները պատահական հանդուպումներէն, ժամանակաւոր կենակցութիւններէն անցել էին տեւական և կազմակերպւած համակեցութեան։ Տոնմական կարգը այդպիսի մնայուն և ներքնապէս կազմակերպւած համախմբում է։ Սակայն տոնմական հասարակութիւնը Ն. Աղոնցի քննութեան նիւթ չի դառնում։ Հաւանական է այն պատճառով, որ այդ սահմանում ամեն տուեալ պահասում է, զրաւոր ազդեցութիւններ չկան։ Հասարակական հոլովոյթի այդ փուլը անցել են նաև Հայաստանում ապրող ժողովուրդները, ինչպէս նաև Մերձասոր Արեւելքի ժողովուրդները։ «Հին Հայոց Աշխարհայեցողք» ուսումնասիրութեան մէջ Ն. Աղոնցը արեւելքի կրօնների մէջ շատ անգամ գտնում է տոտեմիզմի հետքերը, իսկ ժամանակակից արեւելագէտ պատմաբանները անմիտելի են համարում տոտեմական հասարակութեան գոյութիւնը՝ եզրիպտոսում, Բաբելոնի և Փոքր Ասիայի մէջ։ Հայ իրաւագէտ և պատմաբան Խ. Սամուէլեանը իր՝ համադրական եռահատոր «Հին Հայաստանի Կոյսութիւն» աշխատանքի առաջին հատորը նուիրել է քարէ դարին և տոտեմական հասարակութեան։ Նրան սրպէս ազդեցութիւն ծա-

ռայել են երբեմնի կենդանի աշխարհից մնացած փշրանքները՝ հէքաթներ, առասպելներ, ժողովրդական վէպ, աղօթքներ, հաւատալիքներ և մեր պատմագէտների մօտ գտնուած ազդեցական նիւթերը։ Այս նիւթերով և ժամանակակից յետաձեռն ժողովուրդների կեանքի ուսումնասիրութիւնների տուեալներով Խ. Սամուէլեանը փորձել է գծել Հայաստանի ամենէն հին՝ կազմակերպւած տոտեմական հասարակութեան պատկերը։

Եթէ Խ. Սամուէլեանի նիւթը Հայաստանի տոտեմական հասարակութիւնն է, ապա Ն. Աղոնցի նիւթը՝ նախարարական Հայաստանի հասարակութիւնն է։ Հասարակական զարգացման այս երկու փուլերի մէջ ընկնում է տնտեսական կարգը, որի ուսումնասիրութիւնը Ն. Աղոնցի համար լոկ մէկ ներածութիւն է լաւ հասկնալու նախարարական կարգի ծագումը։ Մեզ համար կարեւորն այն է, որ նա կը շեշտէ Հայաստանում տոնմական հասարակութեան գոյութեան վերայ և կը համարէ այն մէկ կարեւոր փուլը հայութեան հոլովոյթի։

Ն. Աղոնցի գլխաւոր աշխատանքից քսան և հինգ տարի յետոյ Հայաստանի համալսարանի պրոֆէսոր Յ. Մանանդեանը հրատարակում է «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» նշանաւոր գործը։ Նրա արժէքն այն է, որ հայ պատմիչների մօտ տոտեմական ընդհանրութիւնը նրա վերաբերմամբ սպառնիչ կերպով հաւաքել է և օգտագործել։ Հայոց նախարարական կարգը քննելիս Աղոնցը յատուկ ուշադրութիւն է դարձրել հայկական աւատականութեան ծագման վերայ, իսկ Յ. Մանանդեանը գլխաւորապէս ուսումնասիրում է «Արշակունեաց շրջանի նախարարական կազմակերպութիւնը իր ուրոյն բովանդակութեամբ և իր բոլոր էական առանձնաշատկութիւններով»։ Նա էլ լայնօրէն կիրառում է բանասիրական մեթոդը՝ շատ յաճախ օգտուելով

Մարբէ, Զաւարտովի և Ն. Ազոնցի արած
ստուգարանութիւններից: Նա յատուկ
տեղ է տալիս «Նախարարական կազ-
մակերպութեանը վերաբերող այն
բոլոր տիրութիւնների և կարեւոր վը-
կայութիւնների քննութեան ու ճշշու-
մանը, որոնք հանդիպում են նախարա-
րական շրջանի մատենագրական հայադ-
բիւրներում»: Յ. Մանանդեանը շատ
տեղերում ճշտում է, լրացնում Ն. Ա-
զոնցի աշխատանքները, շատ բանի մէջ
հակասակ երբակացութեանց հանդուժ,
սակայն նա ամբողջութեամբ մնում է
Ազոնցի հայաց պատմութեան գծած սխա-
տմբի մէջ: Նա էլ մեր նախարարական
կարգին նախորդող շրջանը համարում է
տոհմական կարգը, նա էլ նախարարու-
թիւնը կարծում է «համապատասխանող
իր էութեամբ Արեւմտեան Եւրոպայի
ֆեոդալիզմին», նա էլ նրա արմատները
որոնում է «Իրանական կենցաղի և կուլ-
տուրայի ազդեցութեան» շրջանակում:

* * *

Ըստ Ն. Ազոնցի արեւելքում պե-
տութիւնն այլ հիմքեր և կառուցուածք
ունէր, քան Արեւմուտքում: Հոռմէա-
կան կայսրութեան մէջ պետականութեան
գաղափարի մշակման խնդրում խոշոր
դեր ունէր քաղաքների կազմակերպու-
թիւնը և քաղաքային ինքնավարու-
թիւնը: Արեւելքում պետութիւնը կա-
ռուցուեց տոհմական հիմքերի վերայ:
Արեւմուտքում պետութիւնը քաղաք-
ների գաղնակցութիւն էր: Արեւելքում
տոհմերի գաղնակցութիւն: Այս չի նշա-
կում ինտրիգ, որ Յունաստանը և Հռոմը
տոհմային կառուցուածք բնաւ չեն ու-
նեցել, այլ միայն այն, որ Յունաստա-
նում և Հռոմում տոհմական կարգը առ-
տէճանաբար տեղի է տալիս *սերիսորիալ*
— պետական սկզբունքին, անաստական և
քաղաքական զարգացումը ստեղծում է
բազմաթիւ քաղաք-պետութիւններ, ուր
և կենդրեանում է ամբողջ հոգի-մտա-

ւոր կեանքը և ընկերային-քաղաքական
պայքարը: Դասական Յունաստանը քա-
ղաք-պետութիւնների ցանց է, իսկ հան-
րապետական և կայսերական Հռոմը գը-
րեթէ ինքնավար քաղաքների գաղնակ-
ցութիւն:

Արեւելքում տոհմական յարաբերու-
թիւնները մնացին Շորպէս՝ հասարակա-
կան կեանքի՝ հիմնական փառաւ անկախ
բարձրագոյն իշխանութիւնից, որ մէկ
հարստութիւնից անցնում էր ուրիշ հա-
րստութեան: Տոհմական կարգի տարե-
րը կարելի է որոնել և գտնել արեւելքի
բոլոր ազգերի կեանքում, սակայն ամե-
նէն բնորոշելը Իրանական աշխարհն է:
Պատմութեան առարկէյ իշխելիս մարերը
և պարսիկները արգէն բազմաթիւ տոհ-
մերից էին բաղկացած, որոնց մէջ հա-
սարակական կառույցի, լեզուական և կրթ-
նական միութիւն գոյութիւն ունէր:
Սկիզբը մարերն են, որ տոհմերի միութե-
թիւն ստեղծելով անցնում են պետական
կեանքի: Իշխանութիւնն անցնում է տոհ-
մերից մէկին, որ ամենէն ուժեղն է,
կազմակերպւածը, լաւ զինուածը: Ապա
նրանց տեղը չուտով բռնում են պար-
սիկները: Կիւրոսը միացնելով պարսկա-
կան տոհմերին՝ զերիշխանութիւնը խլում
է մարերից և հիմնում է Աքամենեան-
ների պարսիկ պետութիւնը: Դինաս-
տիական այս փոփոխութիւնները չէին
ազդում իրանական հասարակական ներ-
քին հիւստեածքի վերայ, որ բազմաթիւ
զարերի անցնալով ունէր և վերին ատու-
ճանի կենտրոնակութիւն: Տոհմերը կ'ապ-
րէին իրենց կեանքով, մէկ անգամ մը-
շակւած սովորութեական օրէնքներով,
Պետութիւնը, որ նշանակում է իշխող
տոհմը՝ շատ քիչ էր միջամտում նրա
ներքին կեանքի մէջ: Տոհմը ապրում և
մեծ անում էր իր ուժերի հովովովով:
Այս տոհմերի ռազմական և անտեսական
ուժերի վերայ յիշուած Աքամենեան-
ները հիմնեցին արեւելքի ամենամեծ
կայսրութիւնը՝ հաւաքելով մէկ իշխանու-

թեան տակ բազմաթիւ մշակոյթներ, աղ-
գեր, հաստատութիւններ: Արանցից
Լուրաքանչիւրը իր տուրքը տուեց ըս-
տեղծելու համար այն, ինչ որ մենք հա-
ւաքական տնտեսով կոչում ենք իրա-
նիզմ:

Ա.քամենեանները՝ յատկապէս Դա-
րէն Վշտասպեանը տոհմերի անջատողա-
կանութեան գէժ պայքարելու համար
կատարեցին նոր վարչական բաժանում,
հիմք դրեցին սասրսպուրթեանց, որ պետա-
կան սկզբունք էր՝ ընդէմ տոհմականի:
սակայն այս շատ բան չփոխեց. նրանց
պետութիւնը միշտ մնաց տոհմերի կա-
մաւոր և հարկադրեալ գաշնակցութիւն:
Ա.քամենեաններին յաջորդող Սեւեւկեան-
ները պետական սկզբունքը հետապնդե-
ցին և ջանացին քայքայել տոհմական
կարգը: Իսկ Արշակունիների օրով «պար-
թեւ տոհմական աւանդութիւնները՝ բեկ-
ւելելով Սեւեւկեանների պետականու-
թեան միջավայրում՝ ընդունում էին ա-
ւետական բնոյթ»: Իրանի քաղաքական
զարգացման այս երեք տատնանքները
անդրադարձել են բոլոր այն ազգերի և
երկիրների վերայ, որոնք կրել են իրա-
նիզմի խոր ազդեցութիւնը: Հայաս-
տանն էլ այդ երկիրներից մէկն է: «Հա-
յաստանը, որպէս իրանական աշխարհի
քաղաքական և մշակոյթային կազմիչ
մասը՝ պիտի կորէր նրա հետ զարգաց-
ման ընդհանուր ուղին: Իրանի պատմու-
թեան ամենից ցայտուն մոմէնտները,
նրա հոլովոյթի հիմնական փուլերը՝ պէտք
է անդրադառնային հայկական կեան-
քում»: Եւ այդ այն պատճառով, որ հա-
յութիւնը իր պատմութեան արշալոյսին
բազարիչ մաս էր կազմում իրանական
աշխարհի: Մտերի և Ա.քամենեան հա-
լըստութիւնը իրենց իշխանութեան տակ
էին տուել Հայաստանը: Եւ այդ այն պա-

հուն, երբ արմէնները նոր էին մտել
մեր երկիրը, ամբողջութեամբ չէին զը-
րաւել, նոյնիսկ նստակեաց կեանքի չէ-
ին անցել և իրենց շուրջը չէին համա-
խմբել երկրի աւելի հին բնակիչներին:
Ուրեմն դեռ չկաղապարւած, չկառուց-
ւած հայութիւնը կրեց իրանիզմի քա-
ղաքական և մշակոյթային ազդեցութիւ-
նը: Այս հանգամանքը ի նկատի ունի-
ն. Ադոնց երբ Հայոց Պատմութիւնը՝ գարա-
շըջանների բաժանման ժամանակ մինչև
Արշակունիներին հանդէս գալը արտաքին
տեսակէտից կոչում է Ախմէնեան իսկ
ներքին տեսակէտից՝ Տիգրանեան Արա-
շէսեան հարստութեան մեծագոյն ներ-
կայացուցչի՝ Տիգրան Մեծի անունով:

Այս մէկ ամբողջ շրջան է, որ սկըս-
ւում էր Քր. առաջ V-րդ դարից և վեր-
ջանում է Քր. յետոյ առաջին դարի կէ-
սերին, երբ Հայաստանում հաստատում է
Պարթև Արշակունիների մէկ միւլը: Քաղա-
քական և ընկերային տեսակէտից նա
համապատասխանում է Իրանի պատ-
մութեան նախապարթևական շրջանին:
Այդ մեծ ժամանակամիջոցը, Տիգրանեան
դարը, ըստ Ադոնցի՝ հայոց տոհմական
կեանքի շրջանն է: Նրան յաջորդող
Արշակունեաց Դարը հայ նախարարու-
թեան շրջանն է: Արշակունիների հարըս-
տութեան անկումը Հայաստանում տեղի
է ունենում V-րդ դարի քսանական թը-
ւերին, զրա հետեւանքով հետագայ դա-
րերը նախարարութեան աստիճանական
անկման շրջանն է համարւում: Հայոց
նախարարութեան ոսկեդարը կապւում է
Արշակունիների իշխանութեան հետ:

Ընկերային հոլովոյթի տեսակէտից
Տիգրանեան դարը կարելի է կոչել նաեւ
կոմարսպուրթեան շրջան, Արշակունիների
դարը Ասրաշգինի շրջան:

1. ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՏՈՀՄԱԿԱՆ

ՇՐՋԱՆԸ

Տոհմը արիւնակիցներին միութիւն է . նրա անդամները հաւատում են , որ ծագում են մէկ նախահօրից , հետեւապէս սերւած են միեւնոյն արիւնից : Ծագման նոյնութիւնը դառնում է հասարակական ոյժ և հարկադրում հաւաքել տոհմապետի շուրջը : Ծագման ընդհանրութիւնը սրբադրժուում է նաև տոհմական պաշտամունքով : Ամեն տոհմ կրօնական միութիւն է : Նախահայրը յայտարարւում է սուրբ : Նա աստուածներից և հերոսներից սիրւած է : Նրան զոհեր կը մատուցանեն և տոհմի համար նրա հովանաւութիւնը կ'հայցին , ներքին խաղաղութեան պահպանումը տոհմապետի սուղին պարտականութիւնն է : Տոհմի մէջ մասնաւոր սեփականութիւն գոյութիւն չունի . ուրեմն չկայ ժառանգութեան սկզբունքը : Ծառմական և անշարժ հարստութիւնը ընդհանուր է , համայնքինը , տոհմինը : Ուստի ներքին խաղաղութիւնը խանգարող պատճառներ քիչ կան : Այդ խաղաղութեան մէջ է տոհմի կենսունակութիւնը : Նրա մէջ ընկերային ընդհանուր չկայ . ինչքի , գոյքի , ծագումնաբանական տարրութիւն գոյութիւն չունի : Արիւնակիցները հաւասար են և նոյն իրաւ : Բոլորն աշխատաւորներ են և բոլորը զինւորներ : Տոհմապետը հաւասարների մէջ առաջինն է :

Տոհմական այս կարգը երկար դարեր ապրել են Մերձաւոր Արեւելքի բոլոր ազգերը : Նա գոյութիւն է ունեցել մեր հարեւան վրաստանում և Աղուանից աշխարհում . սրանց մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ունինք : Նրանց ուսումնասիրութիւնը ուղի է հարթում հասկանալու նաև Հայաստանի ընկերային կառույցը , որովհետև սրանք միեւնոյն պատմամշակութային միջավայրի

արդատիքներ են :

Ըստ Հերոդոտի հայերը հովիւ ժողովուրդ էին : Այս ենթադրելէ տալիս ոչ միայն որոշ աշխատանք , այլև հասարակական որոշ կառուցում՝ տոհմական : Աւելի ուշ կազմակերպւած հայ նախարարական միջավայրում արմատացած որոշ փաստեր՝ նոյնպէս ցոյց կ'տան աւատական կարգից առաջ՝ տոհմական հանրակարգի գոյութիւնը : Նախարարական տներին մէջ հողը նախարարական «տոհմի» սեփականութիւնն էր : Նրա գլուխը կանգնած էր աւագը , «տանուսէրը» : Սրանք նոր միջավայրում նախկին տոհմական կարգի մնացորդներն են :

Հայոց տոհմական կարգը մշակել էր մեր գրերի վիւտից շատ առաջ և երբ գրերից գիւտը եղաւ՝ ոչ միայն տոհմական կարգը վաղուց քայքայւած էր այլև նրա յաջորդող աւատական կարգը քայքայման մէջ էր : Ուստի զարմանալի չէ , որ մեր հին ընկերային կարգը արտայայտութիւն գտած չլինի մեր գրականութեան մէջ , կամ թոյլ յիշողութիւններ միայն պահւած լինին այնտեղ : Նախարարական կարգի նկարագրութիւնից է , որ քիչ թէ շատ կուսնումներ կարող ենք անել տոհմական կարգի մասին : Աւատական կարգի մէջ վերապրող բազմաթիւ տերմիններ , բառերը ծագել են տոհմական կարգի մէջ և այն բնորոշող գաղափարներն են : «Ազգ» բառի իմաստը փոխելէ հայոց հասարակական - քաղաքական հոյովոյթին զուգընթաց : Ծագել է տոհմական միջավայրում և նշանակել է արիւնակիցների միութիւն . յետագայում որոշել է նախարարական տոհմի ընտելութիւնը : Նոր ժամանակներում հայոց լեզուի վերայ կառուցւած մշակութային միութիւնը ցուցահանող գաղափարէ դարձել : «Տունը» տոհմի բնականավայրը որոշող յատուկ տերմին է , իսկ միջնադարում «սուռն» համարել են նախարարական մեծ թէ փոքր միութիւնները : «Տումրակ» տոհմական միջավայր

րուսւմ կ'որդէր տոնմի պետին , աւատաւ-
կան պայմաններու մայր անունով որակ-
ւել են նախարարական տները պետերը ,
նոյնիսկ թագաւորը , նա ընկերային ան-
հաւատարութիւնը բնորոշող գաղափար է
գարծել : (Սկզբունք) տոնմական կարգի մէջ
ստեղծւած բառ է , նշանակում է տոնմի ,
ցեղի որդի , իսկ աւատական պայման-
ներու միօրինակ է իմաստը և գարծել մի-
այն նախարարական (տոնմի) անդամները
նոյր գաղափար :

Այս բոլորը ցոյց են տալիս ծագումն
և հասարակական ձևերի այն ներքին կապը
որ կաջ տնտեսական և սոցիալական կարգերի
մէջ: Մէկը նախորդել է միւսին, մէկը
շարունակուած է ինչն է ու զարգացումը
միւսին:

Հայաստանը նպաստաւոր պայմաններ ունէր տոնմական հասարակակարգը երկարատեւ դարձնելու: Նախ իր լեռնային կազմը, զիրքը, անհուն և խառնաձեւող կտրուածքները, լեռնաշղթաները, ձորերը և հովիտները ստեղծում էին տեղական մեկուսացած անկախայրեր, հաւաքման կենդրոններ, որոնցից շատերը երկիրը գրեթէ հողովայթի ուրբի ու գլինիքի են ունեցել: Այդպիսի մեկուսացման մէջ մշակուել են լեզուներ, ջարբաուներ, վարք ու բարք, իրաւունք և արժեքներ: Ապա՝ Հայաստանում կը հանդիպէին իւրաքուհի այնտեղ կը հաստատուէին յազմայիւ ազգագրական – երկրի տարրեր, որոնք իւրաքուհի կը տարբերէին ծագումով, լեզուով և կենցաղով: Հայաստանը լուսագոյն ապաստանն էր ամեն կողմից գաղթող և փախչող մուգոյրդների: Դեռ նախապատմական շրջանից մեր հայրենիքը բազմաթիւ ցեղերի մրցութեան դաշտ էր, ու մեր երկիրը չէր նպաստում նորանց ազգորեն ձուլւելուն, զործակցութեան, քաղաքական կենդրոնացումին քննհակառակն:

մեկուկուսացած միջավայրում տեղի կ'ունենանար իւրաքանչիւր ազգազրախան միաւորի ինքնորոշումը և զարգացումը :

Աւելի քան քսան ցեղային միութիւններ կ'ապրէին այն հողամասի վերայ, որ յետոյ պիտի դառնար Հայաստան և կառուցէր հայութիւնը, Թէպէտ դանդաղ, բայց և այնպէս կատարուեւմ էր տարրեր ցեղերի աստիճանական հաւաքումը: Սկիզբը այդ աւելի կոշտնաւոր այս կամ այն մեծ ցեղի շուրջը, որ որեւէ պատճառով հաւաքուեւմ էր իր շուրջը հարեւան դաշտում, լեռնալանջում, հովիտում ցրւած ցեղերին: Մտեղծուեւմ էր տեղական, աւելի մեծ միութիւններ, այս կամ այն կենսական հարցը լուծւող յուճեղու համար:

Զուլումի, միտլումի և գոլմիան կուրի այս գործողութեանց մէջ մի քանի ցեղեր կորչում են, ոչնչանում, սակայն իրենց անունը թողնում են այն հողաշերտին, ուր երբեմն ապրելիս են եղել։ Այսպէս՝ ալլեւս չկան արտոյնները, ասսպիւնները, սառիսկները, յասսանները — որպէս ուրոյն ժողովուրդներ, սակայն կան Աւարաւսը, Սպիւրը, Տալլը, Բասկը որպէս երկրի անուններ և յիշողութիւններ իրենց նախկին բնակչութեանց մասին։

Միացումի և ցեղերի հաւաքման այս գործին նպաստեց արմէններէ արչաւանքը, որոնք աստիճանաբար տարածելով և տիրելով մեր երկրին զրախ բերեցին Հայաստանի փաղափարն մութրիւնը: Հայոց հոգեբրի հաւաքման այս գործը սկսուում է Արածունիի հովիտից, ծաւալուում է Տիգրիսի ակունքները: Արածանիով բարձրանում է գէպի Արարատեան դաշը, Արաւի հովիտը և իր մէջ է առնում վտրի Կովկասի լեռնաշղթան: Հայութեան ձեւաւորում և կառուցման այս գործը Քր. առաջ երկրորդ դարում հանդուում է Հայաստանի քաղաքական անկախութեան: Զուգընթաց մշակուում է նաև հայոց լեզուը: Արտայայտանները ընդարձակուում

են Հայաստանը ի հաշիւ հարեւաններէր։ Միացումի և ծաւալման այս գործը սկը-
ւում է երկու կենդրոններէց՝ հիւսիսում՝
Արարատեան գաւառից, հարաւում՝
Ծովագ աշխարհից։ Ծնորհիւ այս ծաւա-
լումի նորանոր ցեղեր գալիս են աւելնա-
լու նախնիներէ վերայ և հայութեան
ազգային գիմագիծը կերտելու։

Ն. Ազոնցը ազգագրական այս բազ-
մազանութեան մէջ վեր կը հանէ սեմա-
կան տարրի դերը հայութեան կառուց-
ման գործում։ Հիմնւելով հիններէ վըլա-
յութեանց՝ Սարարոնի և Պոնէյոնի
տուեալներէ վերայ նա սկսեալ, աւելի
ճիշդ առաւելալով տարրին խոշոր դեր կը
վերագրէ մեր ժողովրդի ստեղծման
խնդրում։

Վաղայրովիայի բնակչութիւնը,
հնայեալ ժողովրդագրութեան՝ իր հիմ-
քով հակում էր սրբեական աշխարհին,
նա ազգագրորէն կապում էր սեմական
ընտանիքին։ Հիմա բաւականին ապա-
ցուցած է, որ խնդրական - վրական ժո-
ղովուրդները ազգակցութեան մէջ են
սեմականներէ հետ։ Այսպիսով Միջագետ-
քի հարթութիւններէ մինչև Սև ծովը,
երբեմն կը կազմէր ազգակից ժողովուրդ-
ների մէկ շրջան։ Սեմական տարրը բար-
ձրանում էր հարաւից և նւաճում Հա-
յաստանը և Փոքր Ասիայի մեծագոյն
մասը։ Այս հիմնաշերտի վերայ յետագա-
յում աւելանում է հնդկա-եւրոպական
խաւը։ Այս երկուսը՝ առաւելալով և առ-
մեկնալով, ըստ Ազոնցի հիմքն են հայու-
թեան, նրանց շաղախից է կառուցուում
պատմական հայութիւնը։

«Հայոց լեզուի ուսումնասիրութիւնը,
հնդ-եւրոպական հնչիւնաբանութեան
տեսակէտից, ցոյց տուց հայերի ունեցած
ազգագրական կապը հնդ-եւրոպական
մեծ ընտանիքի հետ և որոշեց նրա լեզուի
տեղը հնդ-եւրոպական լեզուների արեւ-
մտեան ճիւղի մէջ։ Կասկած չկայ, որ
ուրիշ ոգիով կատարւելիք ուսումնասի-
րութիւնները պիտի յայտնաբերեն հայե-

րի մօտիկութիւնը արամէական ընտանի-
քի հետ»։

Հայութեան կազմի և կառուցման
այս տեսակէտը Ն. Ազոնցը մշակել էր իր
գլխաւոր աշխատանքի՝ «էջ դեռ երեսուն
և հինգ տարի առաջ։ Այնուհետև նա
շանդաղադրած հայութեան ցեղային
կազմի հարցին։ Իր ուսումնասիրութեան
նիւթը նա դարձրեց արդէն կառուցած
հայութեան հասարակական և քաղաքա-
կան կազմի ուսումնասիրութիւնը։ Սա-
կայն նորագոյն պատմագիտութիւնը և ա-
րեւելագիտութիւնը Մերձաւոր Արեւելքի
ժողովուրդների ցեղագրութեան և լեզ-
ւի մասին նորանոր ուսումնասիրութիւն-
ների կատարեց և միանգամայն սրբագրեց
նախորդ տեսութիւնները։ Արդէն իսկ
նախորդ դարի վերջերին արեւելագէտ-
ները կասկածում էին, թէ Մերձաւոր Ա-
րեւելքի մշակոյթն ու պատմութիւնը
կարելի է վերածել երկու հիմնական,
սեմական և հնդ-եւրոպական տարրերի և
լեզուների։ Նորագոյն պատմագիտու-
թիւնը ընթացաւ երրորդ ցեղագրական
և լեզուական տարրը որոնելու ուղիով և
հասաւ փայլուն եզրակացութեան։ Նոր
ուղիներ որոնողներից մէկն էր նաև Ն.
Ազոնցի ուսուցիչը՝ Մարրը, որին չէր
բաւարարում նախորդ դարի ալպաչու կոչ-
ւած «հաւանականութեան» տեսութիւնը։
Մարրը գրաւ գէթ մշակեց Յաթերական լե-
զուների ուսումնիքը։ Ըստ նրա Մերձաւոր
Արեւելքի լեռնային դօտիւմ հնագոյն
ժամանակներից հաստատուել էր մէկ ժո-
ղովուրդ, որ ոչնչով չէր յիշեցնում ոչ
հնդեւրոպական, ոչ սեմական ժողովուրդ-
ներին։ Ըստ Մարրի «այս րաստայի բազմա-
թիւ ժողովուրդները կազմում էին արեւ-
նակից ընտանիքների մէկ միութիւն։ Յա-
թեթական ընտանիքը եղբայրորէն ազգա-
կից էր սեմական ընտանիքին, սակայն չէր
նոյնանում նրա հետ...»։ Մարրի տեսու-
թեան հետ զուգընթաց արեւմտեան պատ-
մագիտութիւնն էլ երեսուն հանեց ազգա-
գրական և լեզուական մէկ նոր տարր,
որի բնորոշիչ յատկանիշները մշակւել են,

ինքնորոշել փոքր Ասիայում և Հայաստանում: Այս պատճառով էլ ոմանք կտան նրան աղիանիկ անունը, ոմանք՝ ընորոշեն նրան արևելնիդ անունով, որովհետև այդ ազգազրական միութեան յատկանիշները լաւապէս պահել են հայութեան մէջ: Այժմ սեմական և արիո-եւրոպական տեսութեան կից ասացուցած ճշմարտութիւն է համարւում աղիանիկ ժողովուրդների տեսութիւնը, որով Մերձաւոր Արեւելքի ազգազրական կազմը աւելի բարդ է դառնում, և մըշակոյթն էլ աւելի հարուստ: Էլ աւելին: Աղիանիկ ժողովուրդները աւելի հին են, «բնիկ» և սկզբնապէս զրաւած գրիթէ մտողը Մերձաւոր Արեւելքը: Նրանք նախաշեռն են, որի վերայ յետագայում բարդւում են արիո-սեմական ժողովուրդները:

Վերջին տարիներս հայ պատմաբան
և բանասէր պրոֆ. Մ. Մինասեանը իր
բազմաթիւ աշխատանքների մէջ քննու-
թեան առաւ այդ «երրորդ գործօնի» դե-
րը և արժէքը ոչ միայն հայոց պատմու-
թեան այլեւ համաշխարհային պատմու-
թեան տեսակէտից: Նա ոչ թէ սեմական-
ներին է բարձրացնում մինչեւ Սեւ Մով
և Կովկասեան լեռնաշղթան, այլ «արմե-
նոյդներին» իջեցնում է մինչեւ Սիրիա,
Պաղեստին, Եգիպտոս, Միջերկրականի
կղզիները և Արեւմտեան Եւրոպա: Հա-
մաստիսով է հանսարմենականութեան տե-
սակէտը: Եւ հանսարմենականութեան տե-

Այս բոլորը ցոյց կը տան, որ Հայաստանի լեզուական և ազգագրական կազմը շատ բարդ է քան կարծում էր Ազմընը երեսուն և հինգ տարի առաջ, եւ հայոց ազգութեան ցեղային և լեզուական կառուցումը կատարել է ոչ թէ պատմութեան լոյսի տակ այլ նախապատմութեան խառնուրդի մէջ։ Տարբեր ժողովուրդներ, լեզուներ, կրօններ, հանդիպումը, ձուլումը տեղի է ունենում հրեանազոյն շրջանում։ Սկիզբը մեր հայրեն

նելքում իրարու կհանդիպին ազիակները
և սեմականները ապա արեւմուտքէն
եկող հնդ-եւրոպացիները, յետոյ արեւ-
ելքէն եկող աթիւնաւոր, Մեր տեսողու-
թիւնից հեռու մի քանի դարերի ըն-
թացքում կատարւում է ընտրութեան,
պայքարի, թափանցումի մէկ հսկայ աչ-
խատանք, որի հետեւանքը միայն միզ
յայտնի է գառնում Քրիստոսից առաջ
երկրորդ դարում՝ որպէս հայոց պետա-
կանութեան ստեղծում, Քր. յետոյ հինդ-
երրորդ դարում որպէս հայոց ազգայնու-
թեան կառուցում:

Հայաստանում հաստատուող տարրեր ցեղային միութիւնները իրենց թիկունքում ունէին աւելի մեծ համադրութիւնը և համացեղ զանգւածներ, որտեղից կ'ըստանային նոր հոսանքներ՝ իրանականը Փոքր-Ասիականը, սեմականը և փոխաբերականը։ Այս բազմաթիւ ազգազրական տարրերը ունէին մէկ հասարակական հոռոց՝ տնտեսական։

Թէ տոհմական կարգը մշակուում էր տարբեր ցեղային—ազգագրական միջավայրում՝ դրա ապացոյցը մեզ տալիս է նորէն հայոց գրականութեան մէջ պահւած մի քանի տերմիններ։ Ըստ Աղոնցի «Լեզուական վերագրութեան յատուկ ուշադրութեան արժանի են նախարարական անուանացանկերի մէջ քանի բառերը, որոնք ստեղծուել են տոհմական կարգում և ուղիղ մեկնաբանելու դժուար են տալիս թէ ինչպէս են համախմբուել տոհմական կարգում՝ զլիաւոր թէնիկ շերտերը և ինչ ձեւով են համադրուել ժողովրդական ուժերը տոհմական կարգի քայքայման պահուն»։ Այդպէս են օր․ Մալխաթ, ապրիլ, ընտրուել և ինքնաբերական լինելով, տոհմական կարգի մէջ կնշանակուել իշխող, տեր, թագաւոր և նոյնանիշ էր արամէական «մելիք» բառին։ Նախարարական կարգում նա դարձել է մէկ նախարարական տան խոյրխոյրներին տոհմական տիրոջը։ «Ապրիլ»-նշանակում է տոհմի պետ, աւետարանական կարգում ալի դարձաւ Բագ

բառուհիները տան տոհմական տիտղոսը : «Մանակ» տոհմական կարգի մէջ նշանակուած էր հայր, տոհմի հայր և ստուգաբանութիւն մօտենում է վրացական «նամա» բառին, որ նոյն նշանակութիւնն ունի : Աւստոական կարգում նա դառնում է Մամիկոնեանների տոհմի տիտղոսը : «Տեր» հնդ-եւրոպական արմէնների միջավայրում ծագած բառ է, որ միաժամանակ կ'որւէր երկնային տիրոջը և երկրային իշխողին՝ թագաւորին, տանուտէրին :

Այս տերմինները տոհմական շրջանում կ'որւէր կոնսրվացիոն և նրանց իշխանութիւնը կ'որոշէր : Տերմինների բազմազանութիւնը՝ առաջին, մամակ, մադխաղ, տէր՝ հետեւեալք է Հայաստանի ազգաբնակչան բազմազանութեան : Սեւեական ծագում ունեցող և արամեական ազգեցութեան ենթակայ շրջաններում տոհմապետը կամ կոմարիսը կ'իղչէր մադխաղ, իրանական սահմաններին կից և մշակոյթին ենթակայ շրջաններում նա կ'իղչէր ասպետ, վրացական երկիրներին մօտիկ վայրերում կոմարիսը կ'իղչէր մամակ, իսկ փոխզական և աւանական միջավայրում գործածական էր տէր բառը :

* *

Տոհմային կարգի կազմաւորումում մէկ դարձակէտ է Հայոց պատմութեան մէջ : Ապագատային հասարակութիւնը ստորճանաբար փոխարինում է գասային համակեցութեամբ : Այդ հոլովոյթի սաղմերը ըստ Ագոնցի նկատում է մեր պատմութեան մեծ նւաճումների շրջանում՝ Արտաշէսի և Ջորիադէսի ժամանակ, Քր. առաջ երկրորդ դարի սկիզբին :

«Տոհմային յարաբերութիւնների շրջանը վերջանում է Հայաստանում տեղի ունեցող յուզմունքների ընթացքին՝ Ջորիադէսի և Արտաշէսի ժամանակ : Այդ ժամանակներում է տեղի ունենում տոհմային կարգի քայքայումը և ընկերային նոր յարաբերութիւնների յղացումը : Կատարեող յեղաշրջման էութիւնը ընկերային զանգւածի շրջաւարտում է

և գասայնութեան հիմքերի ծագումը» :

Տոհմը քայքայում է, բաժանւում է ինքն իր մէջ : Մէկ մասը՝ տոհմապետն և իր ընտանիքը հեռոցնեմէ դուրս են գալիս տոհմից, իւրացնում են այն բոլոր իրաւունքներն ու նւթական աղբիւրները, ինչ որ երբեմն տոհմի հաւաքական սեփականութիւնն էր : Տոհմապետը հաւասարների մէջ առաջինը չէ այլեւս, նա դառնում է իշխան : Ժառանգութեան սկզբունքը յաղթանակում է իշխանութիւնն անցնում է հօրից որդուն : Դրան զուգակից ընթանում է սեփականացման իրաւունքի հոլովոյթը : Հօտը, հողը, շարժական և անշարժ հարստութիւնը տոհմապետինն է, նրա գերդաստանինը : Նախկին միաստոր և նոյնիստ հասարակութիւնը տեղի է տալիս բազմաստոր և սեփականացման հասարակութեան : Ըստ տեղում է փոքրաթիւ մէկ գաւի իշխող, «ազնւական», հրամայող, նրան զուգընթաց ստորագրատ և իրաւազուրկ մէկ խաւ՝ ենթակայ առաջինին : Իշխանութեան հասած տոհմապետը վանում է իրեն ենթարկել ուրիշ տոհմերի, ընդարձակել իր իշխանութեան սահմանները, հասնել թագաւորութեան :

Տոհմական հասարակութեան այս ներքին քայքայումը, ընկերային այս յեղաշրջումը տեղի է ունեցել, ըստ Ագոնցի Հայոց ազգային իշխանութեան Արտաշէսեանների հարստութեան ժամանակ՝ Քր. առաջ երկրորդ դարի սկզբին : Տոհմական կարգը տեղի է տալիս պետական կառուցին, գասայնութեան : Արտաշէսեանների հարստութեան ժամանակաշրջանը այդ դասակարգման կոնսպուստութեան շրջանն է : Նա իր վերջնական և ամբողջական ձեւաւորումը ստանում է Տիգրան Մեծի ժամանակ Քր. առաջ՝ ստաթիս դարի կեսին : Ուրեմն հարկաւոր էր մէկ դար, որ քայքայւի հին կարգը և կառուցւի նորը : «Տոհմային յարաբերութիւնների կազմաւորումը, որին զուգակցում է գասայնութեան ծագումը՝ յանձինս իշխա-

նաւորներին, յետագայում տիրող իշխան-
ների, վերջանում է Տիգրան Մեծի փո-
թորկալից ժամանակաշրջանում: Պատե-
րազմական ժամանակի տարգնապը ըստեղ-
ծում է մէկ մթնոլորտ, որ նպաստաւոր
էր տոհմային յարաբերութիւնների փո-
խանցման դասայինին: Տիգրան Մեծի օ-
րով գոյութիւն ունի այն կարգը, որ
մենք կոչում ենք նախադարձական եւ որ
զարցաւ հայ քաղաքական և բնկերային
կեանքի մնալուն և շատ ինքնատիպ
կառույցը:

Ուրեմն ըստ Ագոնցի հայոց նախա-
րարութիւնը առաջացել է տոհմական
կեանքի քայքայումից: Հայաստանը իր
ազգագրական կազմի բազմադանու-
թեամբ ծնունդ պիտի տար բազմաթիւ
նախարարութիւնների:

Տոհմերի միութեան և նախարարու-
թիւնների ծագման այս գործողութիւնը
սկիզբէ առնուել զլիսաւոր ազգագրական
տարրերի՝ մալխազների, ասպետների,
մամսկների, տէրերի շուրջը, ապա ըն-
կերային նոյն հոլովոյթին ենթարկուել
են Հայաստանում ապրող ուրիշ տոհմա-
կան միաւորները: Տիգրանի օրով արդէն
կազմակերպւած են Հայոց՝ յետագայ քա-
ղաքական կեանքում մեծ դեր խաղա-
ցող՝ Բագրատունիների, Մամիկոնեան-
ների նախարարական տները, Մովսէս
աշխարհի իշխանութիւնը, որոնցից ծա-
գել են նաեւ Արծրունիները: Հաւանա-
կան է, որ այդ ժամանակից յայտնի է
գառնուել նաեւ Մալխազների նախարա-
րութիւնը:

Չուլումի և դասայնացման այս
գործողութիւնը ամենից քիչ կատարուել
է ծայրագաւառներում, որոնց բնակչու-
թիւնը միտաւոր չէր և որոնք անմիջա-
կան չիման մէջ էին իրենց թիկունքում
գտնուող օտար, մեծ զանգւածների հետ:
Այս տեղերում հայացումի և նախարա-
րացման գործողութիւնը չամբողջացաւ
մինչև վերջն էլ: Այս երեւոյթը՝ Հայաս-
տանի սահմանների վերայ առաջ բերեց

չորս քաղաքական միաւորներ՝ յոյկիւտ-
րիւններ — Գուգարաց, Աղձնեաց, Նոր —
Շիրական և մէկ չորրորդը, որի անունը
յայտնի չէ: Սրանք Հայաստանի սահ-
մանները պիտի պաշտպանէին, սակայն
ոչ թէ հայոց թագաւորի հրամանով և
նրան ենթակայ լինելու հետեւանքով,
այլ որպէս սահմանային շրջանի տէրեր,
իշխաններ, որոնք ընդունել էին հայոց
թագաւորի գերիշխանութիւնը:

Դասայնացման այս գործողութիւնը
շարունակուել է և ուրիշ տոհմերի մէջ,
ստեղծելով նորանոր նախարարական
տներ և «ազնւանացման» ենթարկելով
Հայաստանը: Կառուցուել է Մարդպե-
տական, Մակրակունիների, Ամասունիների,
Մուրացան և ուրիշ նախարարութիւններ,
որոնց մենք հանդիպում ենք Հայ նա-
խարարութեան դասական շրջանում: Ար-
շակունիների թագաւորութեան ժամա-
նակ:

Նախարարութիւնների կառուցման
այս հոլովոյթը գծելուց յետոյ Ագոնցը
եզրակացնում է հետեւեալը, «Այսպիսի
պայմաններում երկրի ազնւականացու-
մը չէր կարող միանգամից կատարուել ու եթէ
մենք որոշում ենք Տիգրան Մեծի դարը
որպէս տոհմական կարգի անկման և
գասային իշխանութեան սաղմաւորման
շրջան, ապա այդ բանը ճիշտ պէտք է
համարել ընդհանուր առումով»: Հայաս-
տանում գործող ներքին ուժերի հոլովոյ-
թը ստեղծուել է ի վերջոյ այն հարիւր
խումբսրահները, որոնց պատրաստ գտան
Արշակունիները հայոց գահի վերայ հաս-
տատնելիս:

Այժմ՝ մէկ էական հարց կանգնում է
մեր առջի, Ագոնցի կառուցած մեր հա-
սարակական-քաղաքական հոլովոյթի այս
պատկերը, որքան իրական է, որքան
փաստացի հիմքեր ունի: Ըստ Յ. Մա-
նանդեանի Ն. Ագոնցի պատմագիտական
սիտեմի առաջին մասը «հակասում է
այն փաստական աղօտ տեղեկութիւննե-
րին, որ յայտնի է մեզ պատմական աղ-

բիւրներէից, ուստի և զիճեի է ու անհաւանական»։ Եւ իրօք գժուար է եւ թաղել, որ նախա-արմենական Հայաստանում IX-VI դարերում մշակւած Ուրարտական պետութիւնն ու մշակւած լինելն պարզունակ տոհմական կեանք վարող մէկ հասարակութեան գործը։ Արտաքին գործոնների ազդեցութեան տակ այնտեղ զարգանում էր կենդրոնացած մէկ իշխանութիւն, մշակուում էր արհեստների բազմաթիւ ճիւղեր, ծնունդ էր առնում երկրագործութիւնը իր ջրանցքաշինութեամբ, կառուցւում էր մէկ բարդ կրօնական պանթէոն. Եւ այս բոլորը մէկ հասարակութեան գործն էր, որ ապագայի համակեցութիւնից արդէն բռնել էր դասայնութեան ուղին։ Ուրարտական հասարակութիւնը հովիւների համախմբում էր, ինչպէս արչաւող արմէնների, այլ կազմւած էր երկրագործ և քաղաքացիական խաւերից։ Այս հասարակութեան մէջ կար աւատականութեան սաղմերը, որ անշուշտ ներքին ուժերի հոլովոյթով պիտի տանէր դասային կառուցում ունեցող համակեցութեան, եթէ յանկարծ նրա զարգացման ընթացքը կանգ չառնէր արտաքին արչաւանքի հետեւանքով։ Ոչ միայն այդքան. արմէնների արչաւանքը, որտեղից էլ որ եկած լինեն նրանք, մահացու հարւած տեղի Ուրարտական պետութեան և մշակոյթին։ Նրա ստեղծողները՝ արքունիքը, բարձր գասը, բանակը, քրմական զարդ ոչնչացան, նրա աւերակների վերայ կառուցւած հասարակութիւնը պարզունակ կերպարանք ստացաւ. դարերով մշակւած բարդ համակեցութիւնը տեղի տեղ հովական կենցաղ ունեցող մէկ հասարակութեան։

Ընկերային նոր յարաբերութիւնների ստեղծման գործում Ն. Ազոնցի կրչելտէ «պատերազմական ժամանակների տաղ-նաղի» վրայ։ Եթէ այդ ճիշտ է, ապա «պատերազմական ժամանակների տաղ-նաղը» երբեք այնքան բախտորոշ զեր չի

խաղացել մեր պատմութեան մէջ որքան արմէնների արչաւանքի ժամանակ։ Մեր հայրենիքում սաղմնաւորւած առաջին պետականութիւնը կործանեց, նրա մշակած քաղաքակրթութեան ընթացքը կանգ առաւ, սաղմնաւորւած մէկ ազգ մնաւ դեռ սակայնովի լիւթուցւած։ Նրանից շատ բան նոր տիրապետող իւրացնում է, սակայն նրա ստեղծելիքը պիտի լինէր նոր բան, նա ուրարտական չէր լինելու։

Կայ և մէկ ուրիշ առարկութիւն Ն. Ազոնցի սխտեմի գէմ։ Տոհմային կառույցը ոչ միայն հարւած պիտի ստանար «պատերազմական տաղնապնից», այլեւ Հայաստանի տնտեսական զարգացումից։ Յ. Մանասեանը ուսմերէն նրատարակած «Հայաստանի քաղաքները և առեւտուրը» իր աշխատութեան մէջ ապացուցանում է, որ հեղինակական իրաւաբանական ծաղում են առնում Հայաստանի հարաւում և իրենց ազդեցութեան շրջանակի մէջ գցում նաև Միջին և Հիւսիսային Հայաստանը։ Առեւտուրի, զբոսմական շրջանառութեան զարգացման շնորհիւ, ասում է նա, կարելի էր նշանակութիւն է ստանում գրամական կապիտալը։

Որքան և թույլ լինի նրա ազդեցութիւնը բայց նա պիտի առաջ բերէի տոհմական հասարակութեան քայքայումը, արիւնակցական կապի թուլացումը, հոգատիրական հին ձեւերի ոչնչացումն։ Եթէ այս զիտողութիւնները ճիշտ են, ապա Հայաստանի դասային կեանքին անցնելը ոչ թէ Արտաշիսեանների ժամանակ տեղի ունեցած պիտի լինի, այլ աւելի առաջ և անխուսափելիորէն պիտի կապէի Մեհաւար Արեւելում VII - III դդ դարերում կասարւած քաղաքական և տնտեսական խաչու շնորհիւ հետ։

Ն. Ազոնցի հայոց պատմութեան սխտեմը ժամանակակից պատմադիտութեան լոյսի տակ պահում է իր արժէքը և այժմեւութիւնը, սակայն պէտք է չափել

և լրացիւ Սյա բանը կարելի է անել միայն մանրագնէն ուսումնասիրութեան հնթարկելով մէկ կողմից Ուրարտական հասարակութիւնն ու պետութիւնը, միւս կողմից Արտաշիսեան հարստութեան ժամանակ ձեւաւորւած և կառուցւած հայոց ընկերային կազմը: Ադոնցը այս ուսումնասիրութեան հիմնաքարն է դրել՝ հաստատուն և անսոսան՝ միւսները պիտի գան նրա վրայ կառուցանելու իրենց պատմագիտական պրպտումները:

2. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՌԱՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

Նախորդ դարի առաջին կիսին պատմագիտութեան մէջ այն տեսակէտն էր մշակւած թէ աւատականութիւնը ընկերային մէկ կարգ է, որ յատուկ է միայն Եւրոպային ու կ'ընդգրկէ նրա պատմութեան միջնադարեան շրջանը: Ժամանակի մտածողները նրա ծագման և կառուցման մէջ յատկապէս մեծ տեղ տուին քաղաքական ազդակին, ըմբռնեցին այն, որպէս պետական ուրոյն, կազմակերպութիւն: XIX-րդ դարի երկրորդ կիսում պատմագիտական միտքը չբաւականացաւ աւատականութեան այս բնորոշումով և մշակեց նոր տեսակէտ: Աւատականութիւնը համարեց հասարակական հոլովոյթի մէկ փուլը, որ անցել են արեւելքի թէ արեւմուտքի, հին թէ նոր Ժողովուրդները: Գաղափարի պատմագիտական ըմբռնումը լրացեց նոր, հասարակագիտական ըմբռնումով: Միաժամանակ մեծ ուշադրութեան արժանացաւ աւատականութեան ընկերային կողմը՝ դասային յարաբերութիւնները, հողատիրական պայմանները, տնային տընտեսութեան հարցը, քաղաքի և գիւղի առանձնայատուկ կազմը: Մարքսի վարդապետութեան խիստ ազդեցութեան տակ՝ նոր նութիւն ուսումնասիրեցին և նոր տեսակէտ մշակեց միջնադարեան աւատականութեան նկատմամբ: Նա դարձաւ քաղաքատնտեսական մէկ գաղա-

փար, որի սաղմերը կարելի է տեսնել բոլոր ազգերի պատմութեան մէջ:

XVIII-րդ դարի վերջին անգլիացի պատմաբան Դիքսոն իր «Հռոմէական կայսրութեան անկման և քայքայման պատմութիւնը» գրքի մէջ խօսելով կայսրութեան արեւելեան ճակատում մրցորդ պարթեւների մասին, այն տեսակէտը կը յայտնէր, թէ Իրանի մէջ Արշակունիների պետութիւնը տւատական հիմքեր ունէր: Իսկ նախորդ դարի սկզբին Ֆրանսացի հայագէտ և արեւելագէտ Սեն-Մարսկըր Փարիզի գիտութեանց ճեմարանում կարգացած մէկ ղեկուցման մէջ կը պաշտպանէր այն միտքը, թէ արեւելքում Պարթեւ Արշակունիեանց պետութեան կառույցը շատ նման է Միջնադարեան Եւրոպայի աւատական պետութեան: Իսկ ժամանակակից ընկերարանական և պատմագիտական միտքը արեւելքի հին պատմութեան որոշ շրջանները «աւատական կարգ» անունով է բնորոշում: Ռուս Գիտնական Պետրուշևսկին, որ մեծագոյն հեղինակութիւնն է Եւրոպական Միջնորդարի պատմութեան և համեմատական մեթոտի կիրառողը՝ մեր ժամանակի տեսակէտը այսպէս է բանաձեւում. «Աւատական կարգը Եւրոպայի միջնադարեան հասարակութեան զարգացման արդիւնքը է, այն կարելի է գտնել հին Յունաստանում, Հռոմում, Հին արեւելքում, Արարիայում, Ծագոնում և հին ու նոր բոլոր Ժողովուրդների կեանքում: Հազիւ կարելի լինի գտնել մի այնպիսի հասարակութիւն, որ այս կամ այն ձեւով ապրած և անցած չլինի աւատական կարգը»: Աղոյցի համար էլ աւատականութիւնը «լուրայատուկ քաղաքական և ընկերային մէկ կառույց է, որ միայն Միջնադարին յատուկ է: Այն որոշ խմբումով մարդկային հասարակութեան զարգացման անհրաժեշտ փուլն է և նկատուում է բոլոր Ժողովուրդների և մշակոյթների հոլովոյթի մէջ»:

Աւատական կարգի էական յատկա-

նիշներէց մէկը այն է, որ խոշոր կաւածատիրութեան և պետական-վարչական կառուցւածքի մէջ կայ մէկ կապ: Աւատականութիւնը մինք կը բանաձեւենք, որպէս խոշոր կառավարչութիւն միացած մանր հողաւնական հետ, ուր կառավարչորդ իւրացորդ է հասարակական ու քաղաքական իրաւունքներ, դասական, օրհնադրական, վարչական, զինւորական գործառնութիւն: Աւերմն կաւածատիրութիւնը թէ մասնաւոր և քի հանրային իրաւունքի ասորբեր ունի: Այսպէս էր աւատականութիւնը Արեւմտեան Եւրոպայում: Ազոնցը իր աշխատութիւններէ մէջ ապացուցցց, թէ հայոց նախարարական կազմակերպութիւնը համապատասխանում է Եւրոպայի միջնագարեան կառուցին: Մեզ մօտ նրա հիմնական դժերը արդէն պատրաստ էին Արշակունիներէ հայոց զահը բոժրանալիս, Քր. յետոյ առաջին դարի կէսերէն: Աւերմն ոչ Տրդատը, ոչ էլ նրա յաջորդները մուժեցին այն մեր երկրը: Նրանք միայն եղածը յարմարեցուցին պետական այն սիստեմին, որ տեսել էին իրենք պարթեւական միջավայրում: Տեսանք, որ իր անկման շրջանում տոնմը բաժանուում է երկու մասի. մէկը բարձրանում է, դառնում է հեր, իշխան, ապա, միւսը կազմում է խոնարհ խաւը և նոր որակումներ է ստանում. նա զեղջուկ է, շիւնական, ռասիկ, գոնիկ, մշակ: Սրանք ընկերային նոր կարգը բնորոշող սրահումներ են. իսկ ռասիկը և մշակը հաւանորէն ազգագրական հիմեր ունենան. նրանք երկրի հնագոյն բնակիչներն են եղել, որոնց ստորագասել են նոր եկողները:

Հին տոնմային տէրմիւններէ հետ ընկերային նոր միջավայրում ստեղծում են նոր որակումներ: Նոր կարգը բնորոշելու համար: Նախարար բառը նոր պատմաների ստեղծածն է: Ըստ Ն. Ազոնցի նախարար կը նշանակէ երկրի, շրջանի պետ, տէր և վերցրած է Պարթեւական աւատական միջավայրը բնորոշող բա-

ւարանից:

Ն. Ազոնցը նախարարական կարգը քննելիս համեմատութեան կը գնէ այն մէկ կողմից Իրան-Պարթեւական, միւս կողմից Արեւմտեան Եւրոպայի ֆէոդալական կարգի հետ: Արեւմտեան Եւրոպայի սեմեւորչութիւններէ նման «հայ նախարարութիւնները մէկ-մէկ տուններ էին և նրանց հողերը այդ տան անբաժանելի սեփականութիւնն էր»: Այդ տները կամ սեմեւորչութիւնները իրաւապէս հաւասար էին իրարու, սակայն փաստօրէն նրանց արժէքը երկրի մէջ որոշում էր իրենց կաւածաների չափով և զէնքի զօրութեամբ: Ամենէն ուժեղ տները սահմանազուխներին մօտ էին, զրանք յղեղիւրքիւններն էին, որոնք շատ քիչ էին ճանաչում կեդրոնական իշխանութեան հեղինակութիւնը, ապա՝ Սիւնեաց, Մոփաց աշխարհի և Տայքի իշխանները, իսկ երկրի կենտոնական մասերում առաջնակարգ և ինքնավար իշխաններ էին Մամիկոնեանները, Բագրատունիները, Արծրունիները, Խորխոռունիները, Կամսարականները: Այս նախարարութիւնները «դատական ու վարչական անկախութեամբ էին օժտւած: Սրանք իւրայատուկ փոքրիկ իշխանութիւններ էին. իշխաններն էլ փոքրիկ թագաւորներ էին: Իւրաքանչիւրի իրաւունքը պատմանաւորւած էր իր ունեցած ուժից և հզօրութիւնից»:

Բազմաթիւ այս տանուտէրութիւններէ մէջ Արշակունեաց տունը ուրիշ բան չէր, եթէ ոչ մէկ նախարարութիւն և նա էր, որ կերտել էր միւս նախարարութիւնները իր պատկերի նման: Սակայն Արշակունիները նաև երկրի բարձրագոյն տէրերն էին սիւլգիւրներ միւսնախարար բնիկի և բղէշաններ: Նրանք «քաղաւոր» էին, «արիւղ» Հայոց Մեծաց, իսկ նրանց իշխանութիւնը «հերոսութիւն քաղաւորական Հայաստան երկրի»: Բայց թագաւորի և նախարարների յարաբերութիւնները որոշում էր սովորութեան իրաւունքով:

մանաւանդ կողմերի ունեցած զինական ուժով և հարստութեամբ: Պակաս զեր չէր խաղում նաև հարեւան մեծ պետութիւնների զիւանազիտութիւնը. աւատական կարգը լաւագոյն պայմաններ էր ստեղծում զրոյի միջամտութեան համար մեր ներքին զործերի մէջ: Եւ մեր պատմութիւնը մասամբ այդ միջամտութեամբ ստեղծւած հոսանքների պայքարն է իրարու դէմ և Արշակունեաց թագաւորների դէմ: Արշակունեաց Հայաստանը, ասում է Ն. Ազնոյը, իր ամբողջութեամբ կարելի է համարել մէկ մեծ սկիւտրոսիւն, որի մէջ գերագոյն տէրը Արշակունի թագաւորներն են, իսկ վասալները՝ նրանց իշխանութեան ենթակայ նախարարները: Մնացածը հասարակ ժողովուրդն է, և զիւղացիութիւնը... Ֆրանսիայի թագաւորութեան նման որ ամենից առաջ բարձրագոյն սենեորութիւն էր, Արշակունեաց պետութիւնը մէկ խոշոր նախարարութիւն էր, իսկ նախարարներն էլ իրենց հերթին աշխատում էին դառնալ Արշակունեաց տիպի փոքրիկ թագաւորութիւնները:

Տոմարական միջավայրից բարձրացած տանուտէրութիւնը զասային աշխականութեան ծագման մէկ ուղին էր միայն: Կար և երկրորդը: Ըստ մեր Փաւստոս Բլազանդի Արշակունիները շատ հայ նախարարների, ազատների պարգեւում էին հողեր, զիւղեր, «երկիրներ» իրենց ծառայութեան համար, որոնք կապւած էին հարստութեան, պատելի, զերքի հետ: Առաջին կարգի հողերը կոչւում էին «հայրենիք»: Տանուտէրը ոչոքից իր հողը չէր ստացել. իր հայրենիքի վերայ նա իշխան էր. «հայրենիքը» «տէրութիւն» էր, ինքն էլ «տէր»: «Նահանգ» բառով որակւում էին «պարգեւալիւն» կոչւած հողերը: Սակայն որքան էլ տարբեր լինի երկուսի ծագումը նրանք տանում էին միեւնոյն հետեւանքին - մեծ ու փոքր քաղաքական և տնտեսական միաւորների ստեղծման: Հայրենիք և

պարգեւականք՝ հողեր ունեցողները նաև «գործակալութեան» տէրերն էին: Բայց պիտի տարբերել «իշխանութիւնը» «գործակալութիւնից»: Առաջինը կար, գոյութիւն ունէր Հայաստանում մինչև Արշակունիների հաստատուելը, երկրորդը մուծեցին Արշակունիները: Ըստ Խորենացու առաջին Արշակունին պետական հասարակական և պալատական բազմաթիւ պաշտօններ հաստատեց և բաժանեց հայ նախարարների մէջ: «Գործակալութիւնը» լաւագոյն միջոցն էր երկրի կառավարութեան համար: Եւ միջավայրին յարմարելով նրանք էլ աւատական րենոյթին ստանում: Հետաքրքիրն այն է, որ հայոց «գործակալութիւնը» չափւած և ձեււած է պարթեւ Արշակունիների գործակալութեանց վերայ:

Եթէ առանձին նախարարութիւնների գոյութիւնը գերագոյն իշխանութեան ցրումն էր, մասնատումը, նրա սերտ կապակցութեան մէջ զնելը հողի հետ, ապա գործակալութիւնը մէկ որոշ խառնուով գերիշխանութեան հաւաքումն էր, կենտրոնացումը զլիսաւոր սենեորի՝ Արշակունեաց թագաւորի շուրջը: Միայն այս ուղիով է, որ «գործակալութիւն»ները համապետական արժէք են ստանում: Ամենից կարեւոր գործակալութիւն - պաշտօնները յանձնւում էին աւագ նախարարներին և կաթողիկոսութեան: Բաղրասունիսիւնը էր յանձնւած «թագական պատմութեան» իշխանութիւնը. իրերը «թագադիր» նրանք պահակալութեան ժամանակ թագ էին գնում թագաւորի զլխին: Մարդպէսական տոհմին էր յանձնւած Արշակունիների կանանոցի, արքունի վերակացութիւնը, թագաւորական ամբողջութիւնների և բերդերի պահպանութիւնը: Նրանց զերը շատ մեծ է եղել մեր պատմութեան մէջ: Նրանք ձգտել են ամրացնել Արշակունիների հրգօրութիւնը և ստեղծել զօրեղ թագաւորական իշխանութիւն. միաժամանակ նրանք աշխատել են ամեն կերպ ընկճել և

թուլացնել ինքն իշխան և կենտրոնախոյզ նախարարները»։ Նրանք չորրորդ դարում պայքարել են հայ եկեղեցու հօր կալւածատիրութեան դէմ և ջարդել են ըմբոստ նախարարական տներին։ «Մալաղա-գորիւնը» տրւած էր Խորեոսունիներին. նրանք թագաւորի անձի պաշտպաններն էին և թիկնաւաճանի ղլխաւորը։ Սա-կայն հասարակական տեսակէտից ամե-նէն նշանաւոր գործակալութիւնը ուղա-րացեալքիւնն էր ու հազարապետքիւնը։ Առաջինի գործակալութիւնը տարածուած էր «ժիլիւայ աւնեայն» զօրաց զօրախո-րեան», իսկ երկրորդը «աշխարհեսն իւր-հաւանալորիւն» հր եւ «չնկիւնութեան» վերայ է որ կը տարածէր նրա իրա-ւունքները։ Սպարապետութիւնը Մալի-կունեաների ձեռքն էր և կանցնէր ժա-ռանգաբար։ Պատկերազմի ժամանակ հայոց ամբողջ բանակը՝ արքունի և նախարարական՝ սպարապետի իշխա-նութեան տակ էին զրոււմ և նրա ղեկա-վարութեամբ գործում։ Որովհետեւ նը-րանց ձեռքն էր ռազմի ոյժը, ուստի և նրանք մեծ կշիռ բարձր դիրք, հեղինա-կութիւն ունէին քաղաքական կեանքում։ Մամիկոնեանները իրենց ռազմական ոյ-ժը յաճախ գործադրել են Արշակունիե-րի իշխանութեան ամբացման համար, սակայն երբեմն էլ նախարարական իշխա-նութիւնների դատն են պաշտպանել ըն-դէմ թագաւորների։ Եւ ընդհանրապէս մեր պատմութեան մէջ Մամիկոնեաների ռազմացած մեծ դերը ոչ միայն նրանց ռազմական տաղանդի, յանդուգն, նը-կարագրի արի ոգու արդիւնքն է, այլ և այն բանի, որ նրանց իշխանութեան տակ էր հայ բանակը, այն գործիքը, որի միջոցով իրականացնել կարող էին իրենց ծրագրերնրը։

«Հազարապետութեան» գործակա-լութիւնը նւիրւած էր արքունի երկրի տնտեսութեան վերահսկողութեան, զիւ-ղացիական և ելեւմտական գործերի վար-չութեան։ Հազարապետութեան հետ սերտօրէն կապուած է հոգատիրութեան

ձեւերի խնդիրը Հայաստանում։ Ինչպէս տեսանք հողը նախարարական էր, կալ-ւածական. Արշակունիներն էլ ունէին հո-ղեր կալւածներ ձիւտ նախարարական իրաւունքներով։ «Սակայն դժւար է ենթադրել, որ ամբողջ երկիրը բաժան-ւած լինէր թագաւորի և նախարարների և ընդհանրապէս ազատների միջև։ Պէտք է կարծել, որ հողի միծաղոյն մասը պե-տական էր, ուրեմն թագաւորական՝ բա-ռի լայն իմաստով։ Առտնի կենքքում աչքի չէր ընկնում այս տարբերութիւնը, մասնաւոր ուր ամբողջ պետութիւնը և երկիրը կապուած էր Արշակունի անունին»։ Թէ պէտք է տարբերել Հին Հայաստա-նում Արշակունեաց տոհմական հողերը պետական հողերից, երեւում է և այն բանից, որ նրանց անկումից յետոյ ու-տանիկ ազատները ժառանգում են Ար-շակունի հողերը, իսկ հողերի մեծ մասը ճանաչւում է պետական սեփականու-թիւն։ որի վերայ վեհապետական իրա-ւունքներն անցնում են Սասանեան թա-գաւորների։ Ուրեմն ըստ Ագոնի «հիմք կայ որոշելու երկու տեսակ հող՝ թագա-ւորական և նախարարական և կամ պե-տական ու կալւածատիրական, որա մէջ հաշուով արքայական տան, նախարար-ների և եկեղեցու հողերը»։ Հազարապե-տութիւնը արքայական, կալւածական հողերի համար չէր, եթէ միայն նա ար-քայական հողերի հսկիչը լինէր, ապա պիտի վերանար թագի անկումից յետոյ։ Այն ինչ հազարապետութեան պաշտօնը մնում է և մարդպանութեան չրջանում։ Նա պետական հողերի ընդհանուր վերա-հսկողութիւնն ունէր իր ձեռքին. հողի մշակութիւնը, հարկերի հաւաքելը, ու-ոգուման գործը և ընդհանրապէս երկրի տնտեսութեան ընդհանուր վերելքը կա-խում ունէր հազարապետութիւնից։ Նա-խարարական-աւատական կարգում հողն էր պետական բարեկեցութեան աղբիւրը ու զարմանալի չէ, որ հազարապետու-թիւնը ստանար հասարակական մեծ ար-

մէք: Նա Արշակունիները օրով Գնունաց տանուտէրութեան ձեռքն էր, իսկ Մարգարայնութեան շրջանում Անասունիները:

«Փաւստոս Բիւզանդը հազարապետութիւնը հակադրում է սպարապետութեան, մէկի տեսչութեան տակ է գնում շինականութիւնը, հարկատու դասը, միւսը տէր է զինւորական ուժերի և զլուս ազատ դասի, որի պարտականութիւնը հանդէպ արքայական գահի զինւորական ծառայութիւնն էր. ուրեմն նրանց այրուծին կազմ և պատրաստ պահելը սպարապետի գործն էր»:

Դասակարգութիւնն էլ առանձին գործակալութիւն էր, որ յանձնւած էր հոգւոր իշխանութեան: Ըստ Ագոնցի նախաքրիստոնէական Հայաստանի քրմական դասն էլ ունեցել է այդ իրաւունքը, երբ հայ կղերական դասը բռնեց նրա տեղը՝ իւրացրեց նրա բազմաթիւ իրաւունքներն ու արտօնութիւնները: «Գործակարգութիւն մեծի դասակարգութեան» իր ձեռքին ունենալն է որ հայ կղերին, կղարձներ ներգործող ոյժ հայոց քաղաքական և ընկերային կեանքում: Սակայն պիտի ի նկատի ունենալ, որ հայ նախարարները, թագաւորը իրենց կալւած-նախարարութիւններին մէջ ունէին դատ անելու և օրէնսդրելու իրաւունքը: Հայ եկեղեցու ներապետութիւնը կառուցւած էր աշխարհիկ աւատապետական կարգով: Գտնւելով նախարարական միջավայրում նա ենթարկւել է այդ կարգերի ազդեցութեան: «Եկեղեցու ազգայնացումը համազօր էր նրա աւատականացման: Իշխանութիւնը Հայաստանում բաժանւած էր բազմաթիւ տանուտէրութեանց մէջ, բնականաբար նաև եկեղեցական իշխանութիւնը պէտք է յարմարէր տիրող միջավայրին և ընդունէր նրա պատրաստի ձևերը»: Ինչպէս քաղաքական իշխանութիւնն, այնպէս էլ եկեղեցականը ստացաւ ապակիկոսական քրիստոնէական հայկիկոսոսներից արքունիքի «ոստանի» եպիսկոպոսը բոլոր եպիսկոպոսների

պետն էր, ինչպէս Արշակունի թագաւորը բոլոր նախարարների պետն էր: Ամէն մեծ նախարարութիւն ունէր իր եպիսկոպոսը, որոնք ընդունում էին Արարատեան և պիսկոպոսապետի կամ կաթողիկոսի իշխանութիւնը: Ինչպէս նախարարները նրանք էլ կը կոչւէին «սէր»: Նախարարական միջավայրի ազդեցութեան տակ եկեղեցականութիւնը աշխատում էր դառնալ կղզիացած մէկ դաս, բարձր պաշտօնները, եպիսկոպոսութիւնը ժառանգութիւն թողնել իր «տան» մէջ: Հայոց կաթողիկոսութիւնը Լուսավորչի տան ժառանգութիւնն էր և նրանց քաղաքականութիւնը մասամբ ժառանգական իշխանութեան քաղաքականութիւն էր: Եկեղեցին նաև խոշոր կալւածատիրութիւն էր, այդ բանը եկեղեցուն և հայ կղերին դարձնում էր հասարակական ազդեցիկ ոյժ. սակայն այդ պատճառով էլ սկսում է մէկ պայքար եկեղեցու և աշխարհիկ իշխանութեանց մէջ, երբ գէպքերի բերումով հայ քաղաքական ոյժը քայքայւում է, խորտակւում, հայ կղերի կազմակերպւած ոյժը մասամբ իւրացնում է նրա հեղինակութիւնը: Աւատականութեամբ ժառանգւած երկրում հոգեւոր իշխանութեան պետը դառնում է կեղերունաձիգ ոյժ թէ ներքին և թէ արտաքին տէրերի հանդէպ: Նա ազգը ներկայացնող և պաշտպանող անձնէ դառնում:

Նախարարական հոգերին իրաւական բնով թուողը այն պարտականութիւններն էին, որ տանուտէրները պիտի ըստանձնէին գերազոյն տիրոջ՝ սիւզերէնի հանդէպ: Նրանք «ծառայի» էին թագաւորի և նրանց պարտականութիւնը «ծառայութիւն»: «Տէր»ը կարող է իր «ծառաներին» պատժել, հողագործի անել, սակայն «Հայրենիքը» տոհմէն հանել չի կարող, «տանուտէրութիւնը» պիտի յանձնէր նոյն տոհմի ուրիշ անդամին: Նախարարութիւններին ներքին գործերի մէջ մտնելը, տանուտէրը փոխելու իրաւունքը ոչ միայն հետեւանք է ներքին ան-

համաձայնութիւններէ, այլ և մէկ տպագրոյց, որ նախարարութիւնը լոկ մասնաւոր կալւածատիրութիւն չէ, այլ հասարակական կառույց, պետական իշխանութեամբ օժտւած միութիւն, որի կանոնաւոր, օրինական գրութիւնը հետաքրքրում է գերագոյն տանուտէրին:

Նախարարները ուլիս էին անում հաւատարմութեամբ ծառայելու թագաւորին, երդում էին անում իրենց պարտականութիւնը կատարելու: Տանուտէրական «ծառայութիւնը» բազմազան է. ամենից գլխաւորը զինւորական ծառայութիւնն է: Թագաւորի առաջին կոչին նրանք պիտի հաւաքէին գնալու «պաստաւակ» և սուպասակի» նախարարները պարտաւոր էին պաշտպանելու նաեւ արքայական բերդերը, որոնք ցրւած էին երկրի վահան տեղերում: Ծովաց Աշխարհի և Անգեղ բերդի պաշտպանութիւնը յանձնւած էր Մարզպաններին: Նախարարութիւնները ունէին իրենց ամրոցները, բերդերը, որոնք երկար ժամանակ զբաղում էին թագաւորի տրամադրութեան տակ: Արշակունիները այդ տեղերում ունէին բերդապահ պահակախումբ: Այդ հարստութեան անկումից յետոյ պարսիկները շատ ամրութիւններ չէին կարծան որպէս Արշակունիների յաջորդներ: Նախարարները պարտական էին թագաւորին օգնել իրենց խորհուրդներով, զաւարքունիք, մասնակցել «աշխարհաժողովներին», ուր կը քննէին ամբողջ երկրին յատուկ խնդիրները: Նրանք, խնչպէս Արեւմտեան Եւրոպայում, ոչ միայն իրենց ներկայութեամբ «փայլէին տալիս սէնյորի տօնական մեծ հանգչաններին, այլևս գործակցում էին նրան քաղաքական և կառավարական գործերում» — ինչպէս ասում է Յ. Մանանդեանը: Այս ձեւով նախարարութիւնը կամ տանուտէրութիւնը դառնում է հասարակականօրէն անհրաժեշտ մէկ ոյժ: Որքան էլ աւատական, թոյլ կառուցւած քով Արշակունիները Հայաստանը պետութիւն

էր, ու նախարարութիւնը չնայեա՞ծ իր կենդրոնախոյզ միտումներին՝ համապետական կեանքի վարիչն էր: Նա շինարար ոյժ էր և միակն էր իր բանակով, իր խորհուրդներով, իր կազմակերպութեամբ, որ կարող էր կառուցել աւատական պետութիւնը: Զպէտք է մոռանալ, որ ուրիշ հասարակական դաս՝ հանրային — շինարարական ճիգերով՝ մեր կեանքում գոյութիւն չունէր: Հայ բուրժուազիան չկար, հայ «շինականութիւնը», «անազատը» հանրային արժէք չունէր — Արշակունիաց պետքնաւ փարիջը հայ նախարարութիւնն էր:

Այսպիսով հայոց Արշակունիների պետութիւնը մէկ փորձ էր համաձայնութեան եզր գտնելու կենդրոնաձիգ և կենդրոնախոյզ ուժերի մէջ և միասնական ջանքերով լուծելու հանրային հարցերը: Առասպաւնութիւնը հասարակութեան կազմակերպութեան մէկ ձև է, ուր ի մի են համախմբուում հանրային ցրւած ուժերը և ի սպաս շրջում պետքնաւ և հասարակութեան: Այսպէս էր Արեւմտեան Եւրոպայում այսպէս էր և Հայաստանում:

* * *

Արշակունիների դարաշրջանը, ասել է մօտ չորս հարիւր տարի՝ հայոց նախարարական կառույցի ոսկեդարն է: Նա զարգանում է բնականոն ձեւով: Սակայն Արշակունիների անկումը իր հետ բերեց իրենց «հովանաւորած կարգի քայքայումը»: Նախարարութիւնը քայքայւում է ներքնապէս: «Անպոկները», որ նախարարական տոհմի զաւակներն էին, բաժանւում են տոհմերից առնում իրենց հողերը: Նրանք կազմում են առանձին դաս, ստեղծւում է մանր ազնւականութիւնը, ասպետների դասը, որ իր ուժերը տրամադրում է մեծերին: Տոհմական-տանուտէրական հողը բաժանւում է, անդամահատւում: Ըստ Ն. Աղսնցի V-VI-րդ դարերը «ոսպնական աղատութեան» զարգացման շրջանն է: «Զար-

գացում է սեպհական իրաւունքը և նրա զօրութեամբ մեծ տները քայքայում են և վերածւում մանր սեպհական կենդրոններին: Ապա զալիւ է արտաքին հարեածը: Հայաստանը մի քանի անգամ բաժանւում է երկու հարեւան կայսրութիւններին՝ Պարսկաստանի և Բիւզանդիոնի մէջ: Օտարի տիրապետութիւնը սպանիչ ազդեցութիւն է ունենում նւթարարական սխտեմի վրայ: Պարսկական Հայաստանում նախարարական կարգը աւելի ամուր էր, կայուն: Պարսկիները բոլոր փորձերը ոչնչացնելու այդ կարգը իզուր անցան. նախարարութիւնը իշխեց ձեռքին պայքարեց հայութեան ողնաջարը կազմող տանուտէրական կարգը պաշտպանելու համար: Մինչև Պարսից՝ Սասանեան իշխանութեան վախճանը նախարարական կառույցը մնաց մեր երկրում և անցաւ նոր տէրերին աւբաներին, որոնք նոր հալածանքներով թուլացրին հայութեան զեկավար դասը՝ նախարարութիւնը:

Բյուրդլին այլ պայմաններ ստեղծեց նախարարութեան համար Հայաստանի Բիւզանդիական բաժանում: Սկիզբն առնող «սատրապութիւնները» և մեծ ազդեցութեամբ կամ ներքին Հայքում նախարարները պահում էին իրենց զսասային արտոնութիւնները և ինքնավար գոյութիւնը: Կայսեր կողմից նշանակւած կոմէսները միայն վերին հսկողներ էին: Հայ երկրները օրգանական մասը չէին կազմում կայսրութեան: Նրանց վերայ չէր տարածւում համապետական վարչական սխտեմ ու օրէնքները: Նրանք նման էին փեղեռասներին—զաշնակիցներին, որ այնքան շատ կար կայսրութեան սահմաններում: Զեկող կայսեր հրովարդակով, V-րդ դարի վերջերին յետ այսու սատրապութեանց մէջ «նահապետները», «տանուտէրները» նշանակւելու էին կայսեր կողմէն: Ուրեմն խախտւում էր տոհմային ժառանգութեան իրաւունքը: Սակայն հայ նախարարութեան ամենէն

ծանր հարեածը տուեց Յուսթինիանոս կայսրը VI-րդ դարի երեսնական թւերին 529թ. Բիւզանդական Հայաստանը ենթարկեց զինւորական վերակազմութեան: Կայսերական բանակը մտաւ Հայաստան ստրատէգի կամ զօրքերի մագիստրի հրամանատարութեան տակ: Հայ նախարարների զինւորական իշխանութիւնը վերանում էր. նրանք զինաթափւում էին. կարող էին մտնել միայն Բիւզանդական բանակի մէջ: Նախարարութեան դատարն և գլխաւոր գործը՝ հասարակականօրէն աշխատանքի էր: Դրա հետեւանքով նրա իրաւունքներն ու արտոնութիւնները այլեւս չեն հանգուրժւում: 536թ. Յուսթինեանոսը 31-րդ հրովարտակով նոր վարչական բաժանման ենթարկեց երկրը. ստեղծեց չորս հայկական նահանգներ, որոնք ստացան վարչական և դատական նոր կազմակերպութիւն: Նոր օրէնքը հրահանգում էր. «Հայերը ամէն բանում հետեւելու են Հռոմէական օրէնքներին» վերացեցին տեղական, «բարբարոսական» օրէնքները ժառանգութեան հին ձեւը, սովորութեական օրէնքները: Դրա տեղ վարչութեան, դատարանի, իրաւական — տնտեսական յարաբերութիւնների մէջ տեղ բռնեց Բիւզանդականը: Նախարարութեան զինւորական ոյժը ոչնչացաւ, նւթական հիմքը քայքայեց, արտոնութիւնները և իրաւունքները ջնջեցին. դրա փոխարէն լայն բացին պետութեան վարչութեան և ուղղակի դռները նրա առաջ մտնաւանդ Կ. Պօլսում և Բալկաններում, ուր նա իր բնատուր կարողութիւնները ի սպաս բերեց օտարնպատակներին, այդ ասպարեզում ինքն էլ մաշեց, ձուլեց օտարի հետ: Դրա վերայ տեւեցաւ նաեւ կրօնական—դաւանական պայքարը, որ իշխողի ձեռքին գէշք դարձաւ հալածելու այն, ինչ որ հայկական էր և ինչ որ մշակւած էր դարերի աշխատանքով և սերունդների ճիգերով:

Մեր պատմագրութեան մէջ արժա-
տացել է մէկ կարծիք, ըստ որի նախա-
րարութիւնը պատակտիչ, քայքայիչ հա-
կապետական ոյժ էր: Այսպէս պնդել կը
նշանակէ բռնանալ պատմութեան վերայ:
Նախարարութիւնը հայ քաղաքական և
ընկերային կեանքի հիմքն է: Նրա միջա-
վայրում և նրա հովանու տակ զարգա-
նում է հայոց մշակոյթը, քրիստոնէու-
թիւնը, գիրն ու գրականութիւնը, հայ
շինականութիւնը, իրաւական և ընկերա-
յին բարոյականութեան նւազագոյն գա-
ղափարներ, հայոց եկեղեցին, որ կարիք
ունէր զինուած բազկի: Կարելի է ասել,
ինչ որ մեր պատմութեան մէջ լաւ էր,
արժէքաւոր նախարարական միջավայ-
րումն է ստեղծւած: Որքան շէն ու կան-
գուն էին նախարարական տները քաղա-
քական կեանք կար, հոսանքներ կային,

ստեղծիչ պայքար կար մեր երկրում:
Նրանց անկումով մեր և հայրենիքի
զոհները բացեցին օտարների առաջ:
Շնորհիւ սպառազինւած ազնականու-
թեան Հայաստանը երբէք նւաճւած չէ
եղել այս բառի բուն իմաստով: Ոչ Հոռ-
մը, ոչ Բիւզանդիոնը, ոչ Պարսիկը, ոչ
Արաբը բացարձակ տէրը չեն եղել մեր
երկրի՝ քանի նախարարութիւնները կա-
յին: Օտարները նրանց ընդիմութեան ա-
ռաջ կարճել էին իրենց պահանջները՝
բաւարարել էին հարկ և զինւորական
օգնութիւն ստանալով: Շատ բան զոհել
էր նախարարութիւնը: Արքունի գանձը
նա ուղարկում էր Պարսկաստան, բայց
պահում էր այրուծին՝ Հայաստանի ապա-
ւէնը, զինւած բազուկը: Նախարարու-
թիւնը հայութեան ստեղծող և պահ-
պանող ոյժն էր:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. Ն Ի Ի Թ Ը	1
2. Մ Ե Թ Ո Դ Ը	7
3. Ս Ի Ս Տ Ե Մ Ը	13
1. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՏՈՀՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ	17
2. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱԻԱՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ	24

(12)

ԳԱՆ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0067960

ЦЕНА

III
2641